

ՕՐՀՆԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ 7-11-ՐԳ ԴԱՐԵՐՈՒՄ

5-րդ դարի վերջին քառորդին Հովհան Մանդակունու և Ստեփանոս Սյունեցու կազմած և կանոնակարգած Կցուրդարանը, որպես օրհներգերի (շարականների) ծիսական ժողովածու, Հայ Եկեղեցում գործածվել է շուրջ 150 տարի: Այդ ընթացքում ժողովածուն բաց է եղել նոր երգերի համար և համարվել է թե՛ առկա կարգերին (կանոններին) վերաբերող նոր օրհներգերով և թե՛ նոր կարգերով:

Թե ինչ հավելումներ են եղել 6-րդ դարում, մեզ հայտնի չէ: Առհասարակ այդ դարը նախորդի մշակութային բուն մակընթացությունից հետո նշանավորել է մի խոր տեղատվություն, որը, սակայն, հարաբերական դադար էր, կուտակումների ու վերալիցքավորման տևական շրջան՝ նոր պողոթյունների համար: Այդ շրջանում հայ իրականության մեջ գերակայել են դավանաբանական պայքարը քաղկեդոնականության դեմ և Հայ Եկեղեցու ինքնության ամրապնդման համար գործադրված ջանքերը: Ուստիև ժամանակի մատենագրության մեջ գերիշխել են եկեղեցական կանոններն ու դավանաբանական երկերը:

6-րդ դարի մեզ հայտնի միակ խոշոր հեղինակը Մովսես Խորենացու աշակերտ **Պետրոս Քերթովն** է (Սյունեցի. վխճ. մոտ 558): Նրա ստեղծագործություններից, ցավոք, շատ քիչ բան է պահպանվել: Դատելով մականունից, կարող ենք միայն ենթադրել, որ նա իր մեծ ուսուցչի հետևությամբ գրել է հոգևոր երգեր...

«VI դարը,– գրում է Ն. Թահմիզյանը,– շարականագրության բնագավառում նորույթ չբերեց: Այն անհրաժեշտ նոր կուտակումների շրջան եղավ գլխավորապես: Ժամագրքին կապված երգեցողությունները, սակայն, և հատկապես տոնական օրերին հնչող կանոնագլուխների կատարումները զարգանում էին հե-

տևողականորեն, նոր հատվածների ծանրացման և ոլորումների խորացման, մեծացման ու մշակման հունի մեջ»¹:

Մշակութային նոր մակընթացությունը սկսվում է 6-րդ դարի երկրորդ կեսից և ծավալվում 7-րդ դարի սկզբից՝ «իբրև հետևանք, հարկավ, նաև երկրի տնտեսական բարգավաճման»²: Այս շրջանում շարունակեց փայլել Սյունյաց վարդապետանոցը, «ծաղկեցին Արշարունյաց կամ Երասխաձորի «Վարդիկ հայր» դպրոցն ու Ծիրակի Դպրեվանքը և»³:

Այս ամենի արդյունքը եղավ 7–8-րդ դարերի հայ գրականության ու երաժշտության, ընդամին նաև օրհներգության բուռն ծաղկումը...

Մշակութային նոր վերելքի սկիզբը հիմնականում առնչվում է **Կոմիտաս Աղցեցի** կաթողիկոսի (615-628) անվանը:

Սեբեոսի վկայությամբ, Կոմիտաս Աղցեցին 618 թվականին Վաղարշապատում քանդել է տվել Հոփսիսիմեի մահատակության վայրում կառուցված «կարի ցած եւ մթին» մատուռը՝ նոր տաճար կառուցելու նպատակով: Մատուռը քանդելիս հանկարծ հայտնվում է «լուսաւոր եւ չքնադագիւտ արքունական մարգարիտն՝ այսինքն կուսական մարմին սրբոյ տիկնոջն Հոփսիսիմեի»⁴: Կաթողիկոսն այդ սուրբ մասունքներն ամփոփող մատուռի հիման վրա կառուցում է Հոփսիսիմեի մինչև այժմ կանգուն հռչակերտ եկեղեցին և այդ առթիվ հորինում Հոփսիսիմյանց կույսերին ձոնված օրհներգեր: Դրանք առաջին անգամ հնչել են եկեղեցու օծման ժամանակ, որ հավանաբար կատարվել է Հոփսիսիմյան կույսերի մահատակության հիշատակի օրը⁵:

¹ Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դդ., Երևան, 1985, էջ 158:

² Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Գ, Երևան, 1968, էջ 399:

³ Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին, էջ 24:

⁴ Սեբեոս, Պատմութիւն, Թիֆլիս, 1913, էջ 141:

⁵ Առկա տվյալներից դատելով, Հոփսիսիմյան կույսերի մահատակության հիշատակը ճշվել է արդեն 5-րդ դարում: Այդ կապակցությամբ Մովսես Խորենացին գրել է «ի յիշատակի Սրբոյն Հոփսիսիմեայ եւ նորուն վկայակցացն» ներբողյանը (տես Մովսէս Խորենացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1865, էջ 304-325): Ժամագրքում կա մի երգ՝ նվիրված Սուրբ Ստեփանոսին և Սուրբ Հոփսիսիմեին (տես «Ժամագիրքը Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ», Վաղարշապատ, 1903, էջ 372):

Այդուհետև այդ երգերը, որպես սուրբ Հոհիսիսիմյանց նվիրված առանձին կարգ, օրհնելագու-կաթողիկոսը զետեղել է Կցուրդա-րան-Շարակնոցում:

Հոհիսիսիմյանց կարգն ընդգրկում է «Անձինք նուիրեալք» սկսվածքով նշանավոր Օրհնութիւնը և դրան հաջորդող Հարցնը՝ իր կազմով: Ամբողջ կարգի հեղինակն է Կոմիտաս Աղցեցին¹, բացի Համբարձիհց, որ ավելի ուշ հորինել է Հովհաննես Սարկավազ Իմաստասերը²:

«Անձինք նուիրեալք» Օրհնութեամբ Կոմիտաս Աղցեցին հանդես է եկել ոչ միայն իբրև ճշմարիտ բանաստեղծ, այլև իբրև նորարար հայ օրհնելագության և առհասարակ հայ քնարելագու-թյան ասպարեզում:

«Անձինք նուիրեալքը» հայ առաջին վիպական-վկայաբանա-կան ծավալուն օրհնելագն է: Այն առաջին քերթվածն է՝ գրված հայկական այբուբենի բանակապով (ակրոստիքոս). այսինքն՝ երգի յուրաքանչյուր տուն սկսվում է մեր այբուբենի հերթական տառով. ուստիև քերթվածը բաղկացած է 36 տնից: Հեղինակը այս պարագայում, մեր կարծիքով, հետևել է ԾԺԹ սաղմոսին, որ ստեղծված է հրեական այբուբենի հիման վրա: Հատկանշա-կան է, որ Աղցեցու Օրհնութիւնից հետո այբբենական բանա-կապով հորինված միջնադարյան բազում երգեր կոչվել են «Ան-ձինք»: Այդ Օրհնութիւնից շուրջ կես դար անց (670–680) «Ան-ձինք»–այբբենական բանակապով է իր նշանավոր «Ողբը» հո-րինել Դավթակ Քերթողը³:

¹ Տե՛ս «Շարական հոգեւոր երգոց», Կ.Պոլիս, 1853, էջ Ա–Բ: **Գ. Աւետիքեան**, Բացատրութիւն շարականաց, Վենետիկ, 1814, էջ 435: **Հ. Անասյան**, Հայկական մատենագիտություն, հտ. Ա, Երևան, 1959, էջ LXXV, LXXVII–LXXVIII: Ընդունելով, որ «Անձինք նուիրեալք»ի հեղինակը Կոմիտաս Աղցեցին է, Մ. Աբելյանը, հայտնի չէ, թե ինչի հիման վրա, գրել է. «Շարակնոցի» սկզբում Կոմիտասին ընծայված են «Սրբոց Հոհի-սիսիմեանց կանոնի» ուրիշ շարականներ ևս. բայց դրանք Կոմիտասի գործը չեն ստուգիվ» (**Մ. Աբելյան**, Երկեր, հտ. Գ, էջ 408):

² Տե՛ս **Ն. Թահմիզյան**, Յովհաննէս Սարկավազ Իմաստասերը եւ հայ միջնադարեան երաժշտական մշակույթը, «Բազմավէպ», 1978, թիվ 3–4, էջ 348:

³ Կոմիտաս Աղցեցու «Անձինք»ի և Դավթակ Քերթողի «Ողբ»ի համեմատությունը տե՛ս **Գ. Հակոբյան**, Շարականների ժանրը հայ միջ-նադարյան գրականության մեջ (V–XV դդ.), Երևան, 1980, էջ 122–126:

Կոմիտաս Աղցեցիին նորարար էր ոչ միայն օրհներգի արտաքին հատկանիշով: Ինչպես նկատել է Ն. Թահմիզյանը, «Անձիճը», որը «վարպետորեն չափված գրական խոսքով, դրան համապատասխանող կազմակերպված կշռությամբ ու վառ մեղեդիով աչքի ընկնող» ստեղծագործություն է, կրում է բյուզանդական «կացուրդի» կամ «կոնդակի» ժանրային բոլոր հատկանիշները և միաժամանակ հանդես է գալիս իբրև «լրիվ ազգայնացված և նույն ժամանակաշրջանի բյուզանդական կոնդակների համեմատությամբ նույնիսկ ավելի երգայնացված մի գործ»: Ըստ այդմ, այդ երգը «նոր մակարդակ է ստեղծում հայ հոգևոր արվեստում և զարգացման նոր խթաններ հաղորդում նրան»¹:

5-րդ դարի օրհներգության մեջ արդեն ի դեմս Կույս Մարիամի ներթողվել ու օրհնաբանվել էր կինը, անշուշտ, իբրև Աստվածամայր: «Անձիճը»-ում օրհնաբանվում են «առավել երկրային» կանայք, հատկապես՝ Հոփսիսիմեն: Նրանք ևս թեև սրբացված ու լուսապսակված են, սակայն հանդես են բերված կանացիական գեղեցկությամբ, որից ոչ միայն խենթանում ու ապշում են մարդիկ, այլև տարփանքով են լցվում հրեշտակները.

*Գեղեցկությունը մարմնաւոր պայծառութեան ձերոյ,
յիմարեցոյց զթագաւորն, եւ պակեցան հեթանոսք,
ի զեղ սքանչելի, աստուածատուր կուսանացրն
տարփացեալ զուարթունքն՝ ընդ մարդկան տօնեցին:*

Հոփսիսիմյանները, սակայն, բնականաբար ավելի շատ ներկայացվում են իբրև իմաստուն և առաքինի կույսեր, Քրիստոսի սիրույն նվիրված անձիճք, մարմնական կարիքների մեջ ժուժկալ, «թեթեւաբեռըն՝ մարմով եւ մըտօք՝ սըլացեալք»: Ուստիև նրանք չենթարկվեցին գայթակղություններին ու տոկալով բոլոր տառապանքներին՝ դարձան «երկնաւոր նահատակք», «ողջակէզք բանաւորք եւ զոհք փըրկութեան», Աստծուն ընծայված մարտիրոսներ ու անարատ գառներ (որոջք): Գեղեցիկ է հատկապես նրանց հետևյալ բնութագիրը.

¹ Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացիին, էջ 24:

*Շինուա՛ծք երկնաորք՝ ի յերկրի հաստատեալք
եւ արծա՛նք լուսեղէնք ի յերկինքս կանգնեալք...*

Գեղեցիկ է նաև այն փոխաբերությունը, ըստ որի Հոփսիմյանները երկնային Մշակ-Քրիստոսի որթատունկի ողկույզներն են, որոնք ճգնությամբ ճմլվելով հնձանում՝ վերածվում են ամսահական գինու:

*Օրջմարիտ որթոյն Քրիստոսի շառաի՛ղք
եւ ողկո՛յզք՝ ճրմլեալք երկնաոր Մըշակին,
կոխեցալք ճրգնութեամբ ի հրնձանքս ձեր,
գի ուրախ լինիջիք անմահական բաժակաւն:*

Մեր համոզմամբ, այս տողերը հորինելիս Աղցեցին ներշնչվել է Մովսես Խորենացու՝ Սուրբ Հոփսիմենին ձոնած ներբողյանի հետևյալ հատվածից. «Եկա՛յք այսուհետեւ, Քրիստոսի նոր ժողովո՛ւրդք... իմաստուն կուսանացն զպտուղս բարեբանութեան աստանօր հատուցուք ի պատիւ վկայիցս. աստ՝ ուր կուսութիւն եւ զգաստութիւն պարտ է, զկենսաբեր ողկոյզն պտղաբերելով»¹: Առհասարակ «Անձիւնք»ի վրա որոշակի է Խորենացու ներբողյանի ազդեցությունը. առկա են անգամ որոշ գրեթե բառացի կրկնություններ, ինչպես. «Բռնաւորն պերճացեալ զօրութեամբ հանդիսից»² և «Թագաւորն պերճացեալ զօրութեամբ եւ փառօք», կամ «Ողջակէ՛զք բանաւորք, զենմո՛ւնք կատարեալք»³ և «Ողջակէ՛զք բանաւորք եւ զո՛հք փըրկութեան»:

Կրելով հանդերձ Քերթողահոր ազդեցությունը, 7-րդ դարի քերթողն, այնուամենայնիվ, ստեղծել է մի խիստ ինքնատիպ բանաստեղծություն:

Աղցեցու օրհներգի կենտրոնական դեմքը Հոփսիմենն է: Մարմնավոր և հոգևոր գեղեցկությամբ օծոված այդ կույսը ներկայացված է իբրև պատվական մարգարիտ, որին ձգտում են տիրանալ Արևմուտքի և Արևելքի հեթանոս թագավորները: Դիմելով նրան՝ օրհներգուն բացականչում է.

¹ Մովսէս Խորենացի, Մատենագրութիւնք, էջ 305:

² Նույն տեղում, էջ 313:

³ Նույն տեղում, էջ 324:

*Հոփսսիմէ՛, մե՛ծ խորհուրդ եւ անո՛ւն ցանկալի,
ընտրեալ ի յերկրի եւ դասեալ ի հրեշտակս,
եղեր օրինակ սրբութեան կուսանաց,
վարդապետութիւն՝ արանց արդարոց:*

Աղցեցու բանաստեղծական գլուտերից է հետևյալ հատվածը.

*Եւ դարձեալ Եդեմ աստուածատունկ զարդարի,
քանզի ծառըն կենաց տընկեցաւ ի դրահստին՝
բերելով մեզ պըտուղ զերանելին Հոփսսիմէ՛:*

Հոփսսիմյան կույսերի վկայաբանության հիմնական աղբյուրը Ագաթանգեղոսի Պատմությունն է: Սակայն Աղցեցին իր օրհներգում, ինչպես նկատել է Մ. Աբեղյանը, «հարասություն չի անում, ոչ էլ ամբողջական պատմություն, այլ նոր ստեղծագործում է, այն էլ կազմելով հատ-հատ գեղեցիկ պատկերների մի շղթա, որի բոլոր օրինակների վրա իշխում է մի տոնական ցնձազին հանդիսավորություն»¹:

Օրհներգի պատումի առանցքը տկար, բայց հավատավոր կույսերի մղած այլաբանական պատերազմն է գորեղ, բայց անհավատ հակառակորդների դեմ: Կույսերը երկնքում զինվորագրվում են և

*միաբան ընթացեալք ի տեղի ճակատու՛
զինեցան հաւատով եւ կացի՛ն յանդիման:*

Նրանց աստարում է երկնային աներևույթ զորությունը, և նրանք հաղթում են «գաղտնի պատերազմում».

*Թույացան կորովիք հաստաձիգ աղեղանց,
եւ տրկար կանայքըն վառեցան զինու,
թագաւորն պերճացեալ զօրութեամբ եւ փառօք
ի մանուկ ի կուսէն պարտեալ՝ ամաչէր:*

Այս հաղթանակի արդյունքում Հոփսսիմյաններն արժանա-

¹ Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Գ, էջ 405:

նում են երկնային պսակին: «Սակայն Քերթողի համար ավելի կարևորն այն է, որ նրանք «եղեն փրկանք անծանօթ աշխարհին» Հայոց, այսինքն՝ դարձան պատճառ քրիստոնեության մուտքին ի Հայաստան»¹: Այստեղ արդեն «Անձինքը» ձեռք է բերել նաև հայրենասիրական հնչերանգ, և հենց այդ է հեղինակի բուն նպատակը, որ միտված է ազգային Եկեղեցու սրբագործմանն ու ինքնության ամրապնդմանը: Եվ առաջադրված նպատակին ըստ ամենայնի հասնելու համար օրհներգուն գործի է դրել իր անուրանալի բանաստեղծական շնորհի ողջ զինանոցը: Հիրավի, նրա երկը, Գ. Ավետիքյանի խոսքերով ասած, գրված է «սքանչելի արուեստի եւ վսեմութեամբ պատշաճեալ. յորում թեպէտ չիք այնչափ մթութիւն բանից, բայց վայելչութիւն իմաստից յամենայն տունս զարմացուցանէ զքննօղս»²: Ահա և Մ. Օրմանյանի խոսքը. «Անձինքը» հայկական հին չափով տաղասացութեան տիպարն է, բառերու եւ ոճերու ճոխութեամբը՝ ընտիր հայկաբանութեան օրինակ է, բանաստեղծական արուեստին գերազանցութեամբ՝ նշանատր է, պատմական յիշատակաց անխարդախ հետետող է, եւ եկեղեցական եւ հոգետր օծութեամբը՝ անզուգական քերթուած մըն է»³:

Բերենք նաև արդի ուսումնասիրողներից մեկի հետևյալ գնահատականը. «Ինչպէս Ս. Հոփսիսիմէ տաճարը Հայ ճարտարապետութեան ազգային ինքնատիպ ոճի գեղաշնորհ հրաշալիք մըն է, նոյնպէս եւ իր «Անձինք նուիրեալք» գեղեցկահիւս ստեղծագործութիւնը Հայ հոգետր երգարուեստի եւ բանաստեղծութեան մէջ առանձին փայլով շողացող զոհար մըն է»⁴:

Հոփսիսիմյանց կարգում «Անձինք»ին հաջորդող Հարցնը, Ողորմեան, Տէր յերկնիցը և Մանկունքը հորինված են ավանդական ձևերով ու պատկերներով և ըստ ամենայնի զիջում են

¹ Նույն տեղում, էջ 407:

² Գ. Ավետիքեան, Բացատրություն, էջ 435:

³ Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 671:

⁴ Գ. Փիտեճեան, «Անձինք նուիրեալք» շարականը, Նիւ Եորք, 2003, էջ 22: Ուշագրավ այս աշխատության մեջ քննված են «Անձինք»ի երաժշտական արժանիքները: Երաժշտական երաժշտագիտական քննությունը տե՛ս նաև **Н. К. Тагмизян**, Теория музыки в древней Армении, Ереван, 1977, стр. 260:

Օրհնութեանը: Նշենք, որ այդ երգերում էլ հեղինակը ընդգծել է այն իրողությունը, որ Սուրբ Հռիփսիմեի շնորհիվ քրիստոնեական հավատը տարածվեց հայոց (հյուսիսականների) մեջ.

*Այսօր պայծառացեալ ի կամարս լուսեղէնըս Սուրբն Հռիփսիմէ
եւ հիւսիսականաց սօճողաց ուսոյց փառաւորել Սուրբ
ըզՏէր Աստուած հարցըն մերոց:
Գերրորդութիւնըն՝*

Կամ՝

*Քրիստո՛ւս Աստուած, բացեր զդուռն հաւատոյ Սրբոյն
Հռիփսիմեայ՝
խոստովանել զԱստուածութիւնըդ Քո՛ւ մարտիրոսութեամբ ի մէջ
Հայաստանեայց:*

Սակայն, որպէսզի Հայաստանում քրիստոնեության տարածման պատիվն ու մենաշնորհը չտրվի միայն Հռիփսիմյաններին, հեղինակը նրբանկատորեն ու իրավացիորեն հիշատակում է Գրիգոր Լուսավորչի անունը.

*Որոնց վարդագոյն հեղմամբ սուրբ արեանցըն
նորոգեաց զաշակերտեալսն ի ձեռն Սրբոյն Գրիգորի...*

Կոմիտաս Աղցեցին 7-րդ դարի մեր առաջին խոշոր օրհներգուն է: Նրա հատկապէս «Անձինք նուիրեալքը» եղել է մնում է մեր Ծարակնոցի պատուական եւ ընտրելագոյն մարգարիտներից մէկը»: Այդ օրհներգը, «որ նոր երեսոյթ է մեր հոգեւոր երգասացութեան մէջ, իր կառուցուածքով, բազմաթիւ ու նրբաճաշակ գեղեցիկ պատկերներով, սքանչելի համեմատութիւններով, տաղաչափութեան բազմազանութեամբ եւ մանաւանդ համարձակ մտքերով զգալիօրէն տարբերում է մինչ այդ ընդունւած ու ընդհանրացած համաքրիստոնէական հոգեւոր քնարերգութիւնից»¹:

¹ Խ. Պալեան, Հայ հոգեւոր երգը Է-Ը դարերում, «Գանձասար», Բ, 1992, էջ 311-312:

Կոմիտաս Աղցեցուց հետո, 7-րդ դարի առաջին կեսին ար-
դեն այնքան «բազմացեալ էին երգք շարականաց յեկեղեցիս
Հայոց, մինչև ոչ գիտել միոյ զաւառի երգեցող՝ զմիւսոյն»¹:
Ուստիև Ներսես Գ Տայեցի (Իշխանեցի, Օհնող) կաթողիկոսը
(641–661) հարկ է համարել 645 թվականին Դվինում գումարված
ժողովում կանոնակարգել նաև բազմաթիվ ու բազմազան նոր
երգերով համալրված Կցուրդարանը: Կաթողիկոսը «հրամա-
յեաց ընտրել զարժանն եւ զայն միայն ուսանել»²: Այդ գործը նա
հանձնարարել է Օիրակի դպրեվանքի առաջնորդ **Բարսեղ Մո-
նիհն**: Վերջինս լինելով հմուտ երաժշտագետ-երգաբան, վերա-
կազմել է Կցուրդարանը, «վասն որոյ Մոնընտիր կոչի Օարա-
կանս՝ որ այժմ պաշտի յեկեղեցիս մեր»³:

Այսպիսով, ուրեմն, 645 թվականին (կամ մի փոքր ավելի ուշ)
խմբագրվել է 5-րդ դարում կազմված Կցուրդարանը, որն այդու-
հետև կոչվել է նաև **Մոնընտիր**: Այն, մասնակի վերախմբա-
գրումներով գործել է մինչև 12-րդ դարը՝ դարձյալ բաց մնալով
նորամուծությունների համար...

Ինքը՝ Բարսեղ Մոնընտիրը ևս որոշ օրհներգեր է ներմուծել իր
խմբագրած ծիսարանի մեջ: Նա, ըստ երևույթին, նոր երգերով
համալրել է Ծճնդյան և Հարության կարգերը: Այդ մասին վկա-
յել է Վարդան Վարդապետը. «Զի թէ՛ մեր թարգմանիչն եւ հոգե-
շարժ վարդապետն Մովսէս Խորենացին ասացեալ է
զԾճնդեան եւ զՅարութեան երգս շարականաց, եւ թէ՛ մեծն եւ
հանդիսաւոր ճգնաւորն Բարսեղ, մականուամբ Մոնն կոչե-
ցեալ»⁴: Այս վկայությունից Գ. Հակոբյանը մակաբերել է, որ

¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 61:

² Վարդան Վարդապետ, Հաւաքումն Պատմութեան, Վենետիկ,
1862, էջ 69:

³ Նույն տեղում: Մ. Աբեղյանի կարծիքով, «որ «Մոնընտիր» շարա-
կանը 7-րդ դարում կազմված լինի, այդ կարելի չէ ընդունել» (Մ. Աբեղ-
յան, Երկեր, հտ. Գ, էջ 530: Այս կապակցությամբ տես Գ. Հակոբյան,
Նշված աշխատ., էջ 30–31):

⁴ Վարդան Վարդապետ, Տեսութիւն Անթառամ ծաղկի, Երուսա-
ղէմ, 1834, էջ 6:

Հարության Հարցների հինգ շարքերը գրել է Բարսեղ Ծոնը¹: Ն. Թահմիզյանը նույն վկայության հիման վրա հավանական է համարել, որ Բարսեղ Ծոնը հեղինակն է Հարության Մեծացուցե-ների «գլխավորագույն մասի, որի բաղադրիչներն են, հիմնականում, Ծանդյան և Հարության կտորները», իսկ Հարության Հարցների մեծ մասը հորինել է Անանիա Ծիրակացին²: Մինչդեռ մեր համոզմամբ, Հարության թե՛ Հարցների և թե՛ Մեծացուցեների հիմնական մասի հեղինակը Մովսես Խորենացին է, իսկ Բարսեղ Ծոնը և Անանիա Ծիրակացին ընդամենը հավելումներ են կատարել այդ երգաշարքերում: Թե որոշակիորեն որը ինչ հավելում է կատարել, չենք կարող ասել...

Կարելի է ընդունել Ն. Թահմիզյանի այն ենթադրությունը, ըստ որի «Աշխարհամատրան կոչվող կանոնը... ընծայելի է Բարսեղ Ծոն վարդապետին»³: Այդ կանոնը (կարգը), որ մտնում է Հինանց շրջանի երգեցողությունների մեջ, նվիրված է Զատիկի երրորդ կիրակիին, որը կոչվում է Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակի: Այդ օրը հիշատակումն է Երուսաղեմի վերնատանը Հիսուսի և առաքյալների զատկական ընթրիքի, երբ հաստատվեց Հաղորդության խորհուրդը: Վերնատունը համարվում է առաջին եկեղեցին, իսկ Աշխարհամատրոնն նշանակում է աշխարհաժողով, աշխարհակեղեցի: Հետևաբար այդ հիշատակի օրը «կատարի տօնն անուկատեսց համօրէն եկեղեցեսց»⁴:

Կանոնական Ծարակնոցում Աշխարհամատրան Կիրակիի կարգը բաղկացած է մեկ Հարցնից՝ իր Ողորմեա և Տէր յերկնից երգերով հանդերձ: Այստեղ ժամանակին, անկասկած, եղել է նաև մի Մեծացուցե: Ինչպես մեկ այլ աղթով նշել է Գ. Ավետիքյանը, «լամենայն շարականս տօնից կիրակելից տեսանեմք յօրինեալ Մեծացուցե սեպհական իւրաքանչիւր»⁵: Աշխարհա-

¹ Տե՛ս Գ. Հակոբյան, Նշված աշխատ., էջ 140:

² Ն. Թահմիզյան, Բարսեղ Ծոնը և մասնագիտացված երգաստեղծության ծաղկունը Հայաստանում VII դարում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1973, թիվ 1, էջ 217: Տե՛ս նաև Նույն, Գրիգոր Նարեկացին, էջ 161: Նույն, Ներսես Ընորհալին, երգահան և երաժիշտ, Երևան, 1973, էջ 19:

³ Տե՛ս նույն աղբյուրները:

⁴ Գ. Աւետիքեան, Բացատրություն, էջ 317:

⁵ Նույն տեղում, էջ 507-508:

մատրան Կիրակիի Մեծացուցէն, մեզ անհայտ պատճառով, դուրս է մնացել կանոնական Շարակնոցից: Բարեբախտաբար, Ս. Ամատունին գրչագրերից հրապարակել է պարականոն դարձած այդ երգը, որը բավական գեղեցիկ ստեղծագործություն է¹:

Տպավորիչ է նաև խնդրո առարկա կարգի Ողորմեան, որ Քրիստոս-Փեսայի և Եկեղեցի-Հարսի այլաբանական հարսանյաց հանդեսին նվիրված ցնծագին երգ է, հոգևոր հարսներգ.

*Այսօր հրեշտակաց բազմութիւնքըն սօնակից լինին ընդ մեզ,
քանզի երկնատր Թագատրն եկատրի ի Սուրբ Եկեղեցի:*

*Խընդա՛ եւ զուարճացի՛ր, հարսնացեալդ Աստուծոյ Եկեղեցի՛,
քանզի ըզՔեզ Տէրըն տէրանց ընտրեաց եւ հաճեցաւ բնակիլ ի քեզ:*

*Լուսատրեա՛, լուսատրեա՛, Կաթողիկէ Եկեղեցի՛,
քանզի ի քեզ շող աստուածեղէն ի Հօրէ Լուսոյ ծագեաց
եւ լուսատրեաց զմանկունըս քո:*

Բերված երգը Բարսեղ Ծոնի (եթե իրոք նա է հեղինակը) բանաստեղծական շնորհի վկայությունն է²: Ցավոք, չենք կարող ասել, թե ո՛ր երգերով է նա հավելել Ծննդյան և Հարության կարգերը, այլապես առավել որոշակի կլիներ մեզ համար հորի-նողի բանաստեղծական անհատականությունը:

¹ Տե՛ս Ս. Ամատունի, Հին եւ նոր պարականոն կամ անվաւեր շարականներ, Վաղարշապատ, 1911, էջ 100: Այլ աղբյուրներում պահպանվել է այս Մեծացուցէի մի տարբերակ՝ «Մեծացուցէ Եկեղեցոյ» խորագրով, որը նույնպես հրապարակել է Ամատունին (էջ 118):

² Աշխարհամատրան Կիրակիին նվիրված կարգի Հարցնի ու Գործատան երաժշտագիտական քննությամբ Ն. Թահմիզյանը ցույց է տվել հեղինակի, որպես 7-րդ դարի երգահանի, արժանիքները (տե՛ս Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին, էջ 161-162):

7-րդ դարում օրհներգության ասպարեզում հանդես է եկել նաև խոշորագույն գիտնական-մատենագիր **Անանիա Ծիրակացին** (ծն. 610-ական թթ., վախճ. 680-ական թթ. երկրորդ կես):

Որոշ աղբյուրներ Ծիրակացուն են ընծայել Հարության Հարցները, որոնք բազում այլ աղբյուրներ վերագրել են Մովսես Խորենացուն: Այս կապակցությամբ, ժամանակագրական առումով, ունենք հետևյալ պատկերը. «ՋՅարութեան կարգն բովանդակ, զՀարցներն եւ զՈղորմէքն եւ զՏէր յերկնիցներն Անանիա Ծիրակացին ասաց»¹: «Մեծն Մովսէս Քերթողն... զկարգն Յարութեան սորա՛ է ասել մեծն Վարդան ի տեսութիւն Անթառամ ծաղկին, իսկ այլք ասեն, թէ Անանիա Ծիրակունին է ասացեալ»²: «Սուրբն Մովսէս Քերթող՝ զՅարութեան Հարցսն»³:

Ն. Թախմիզյանը թէն իրավամբ գտել է, որ «Ծարականների հեղինակների ցուցակներում բացահայտվող աստիճանական ճշգրտումներն ու սրբագրությունները նորից ու նորից են հիշեցնում մեզ, որ դրանք ժամանակին կազմվել են (միջնադարյան չափացույցով) գիտական պրպտումների հիման վրա»⁴, այդուհանդերձ Հարության Հարցների մեծ մասը, ինչպես նշեցինք, վերագրել է Անանիա Ծիրակացուն⁵: Մինչդեռ, բացի վերը բերված տվյալներից, ըստ Գ. Ավետիքյանի, «Չկարգ շարականաց Յարութեան ըստ ութ ձայնից՝ բազումք (ընդգծումը մերն է – Հ. Բ.) ընծայեն Մովսէսի Խորենացույ»⁶:

Այսպիսով, հաստատապես, Քերթողահայրն է Հարության Հարցների (նաև Մեծացուցեների) հիմնական հեղինակը: Այդուհանդերձ, պետք է ասենք, որ Անանիա Ծիրակացին հեղինակել է Հարությանը ձոնված երգեր: Խոսքը ոչ միայն Հարու-

¹ Հ. Անապան, Հայկական մատենագիտություն, հտ. Ա, էջ LXVI:

² Նույն տեղում, էջ LXVII: Վարդան Վարդապետ, Տեսութիւն Անթառամ ծաղկի, էջ 6:

³ Նույն տեղում, էջ LXVIII: «Ծարական», էջ Ա: Այս առթիվ տե՛ս նաև Ս. Ամատունի, Նշված աշխատ., էջ 100:

⁴ «Էջմիածին», 1973, Բ, էջ 30:

⁵ Տե՛ս Ն. Թախմիզյան, Ներսէս Ընորհալին, էջ 19: Տե՛ս Նույն, Գրիգոր Նարեկացին, էջ 163 և հոսն:

⁶ Գ. Աւետիքեան, Բացատրութիւն, էջ 284:

թյան Հարցներում նրա կատարած հավանական հավելումների մասին է, այլև այն երգերի, որոնք ընդգրկված են Շարակնոցի Համբարձման կարգում: Այս մասին՝ մի փոքր ավելի ուշ...

Անանիա Ծիրակացուն են վերագրվել նաև Անտոն Անապատականին, Թագավորաց, Առաքյալներին, Հոգեգալստյանը, Հովհաննես Մկրտչին, Գրիգոր Լուսավորչին, Վարդավառին, Մարգարեներին, Վարդապետներին նվիրված օրհներգերը¹:

Մատենագրական տվյալների քննությունը մեզ բերել է այն եզրահանգման, որ Անտոն Անապատականին, Թագավորաց (Թեոդոս թագավորին), Հոգեգալստյան ու Վարդավառի առաջին օրերին, Հովհաննես Մկրտչի գլխատման հիշատակին, Գրիգոր Լուսավորչի վիրապից ելքին նվիրված օրհներգերի հիմնական մասի հեղինակը Մովսես Խորենացին է, իսկ Առաքյալներին, Մարգարեներին (Բ մասի), Հովհաննես Մկրտչի նշխարների հիշատակին, Վարդապետաց (Սուրբ Մեսրոպին) նվիրված երգերի հիմնական մասի հեղինակը՝ Հովհան Մանդակունին: Այդ կարգերում էլ Անանիա Ծիրակացին թերևս հանդես է եկել ընդամենը իբրև հավելող...

Շատ հավանական և մեզ համար ընդունելի է, որ **Անանիա Ծիրակացին է հեղինակել Համբարձման կարգը**: Այդ են վկայում «հին շարականներին ծանօթ գրիչները». «զՀամբարձմանն... Անանիա Ծիրակացին է ոգեալ», «զՀամբարձմանն... Անանիա Ծիրակացին»²: Ըստ Գ. Ավետիքյանի, «Զշարական Համբարձման Տեառն ասեն արարեալ սրբոյն Ներսէսի Լամբրոնացոյ»³: Սակայն Ս. Ամատունին իրավացիորեն նկատել է, որ «Համբարձման շարականների մեջ գործածուած մի

¹ Տե՛ս **Հ. Անապան**, Հայկական մատենագիտություն, հտ. Ա, էջ LXXVII–LXVIII: «Շարական», էջ Ա: **Ս. Ամատունի**, Նշված աշխատ., էջ 105, 139: Ամատունին Անտոն Անապատականին նվիրված պարականոն Օրհնություն հեղինակ է համարել Կոմիտաս Աղցեցուն կամ Ծիրակացուն (էջ 18): Ն. Թահմիզյանը Ծիրակացուն է վերագրել նաև Վարդավառի ու Հոգեգալստյան առաջին օրերի կանոնների երգերը (տե՛ս **Ն. Թահմիզյան**, Ներսես Ընդհակին, էջ 19):

² **Ս. Ամատունի**, Նշված աշխատ., էջ 102: Տե՛ս նաև **Յ. Տաշեան**, Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա 1895, էջ 441:

³ **Գ. Ավետիքեան**, Բացատրություն, էջ 342:

քանի բարդ բառերը ցոյց են տալիս, որ Համբարձման շարականները Է-րդ դարու գրական վաստակ են եւ կարող է գրած լինել Թիրակացին, քան թէ Ներսէս Լամբրոնացին»: Միանգամայն ընդունելի է նաև Ամատունու այն փաստարկը, թե «Համբարձման տօնը լինելով մեր եկեղեցւոյ հին տօներից մին, չէր կարող մինչեւ ԺԲ դար, մինչեւ Ներսէս Լամբրոնացին յատուկ շարականներ չունենալ»¹:

Իրականությունն այն է, որ Համբարձման կարգում ընդգրկված օրհներգերի մի մասը հեղինակել է Անանիա Թիրակացին, մյուս մասը՝ Ներսէս Լամբրոնացին: Որոշակիորեն երևում է, որ Ծարակնոցում իրար են կցված Համբարձման նոր և հին կարգերը: Նոր կարգը, որ ընդգրկում է Օրհնություն («Համբարձաւ Տէրն մեր յերկինս»), Հարցն, Ողորմեա, Տէր յերկնից, Ծառու և Համբարձի, ստեղծել է Լամբրոնացին, ինչպես վկայում է Գ. Ավետիքյանի ձեռքին եղած աղբյուրը (կամ աղբյուրները): Հին կարգը բովանդակում է երկու Հարցն՝ իրենց կազմով, և ավարտվում է Ծառու երգով: Այն հեղինակել է Թիրակացին, ինչպես ֆաստատում են վերը բերված վկայությունները:

Ինչո՞ւ է Լամբրոնացին նոր երգերով համալրել Թիրակացու ստեղծած Հարցները: Բանն այն է, որ վերջինիս հորինած երգերը, ինչպես նշեցինք, վերաբերում են Քրիստոսի Հարությանը և ոչ թե որոշակիորեն Համբարձմանը: Ուստի Լամբրոնացին հարկ է համարել գրել օրվա խորհուրդը ներկայացնող երգեր՝ դրանք կցելով Թիրակացու հեղինակած Հարցներին և ստեղծելով Համբարձման ամբողջական կանոնը:

Այսպիսով, ուրեմն, Անանիա Թիրակացին Խորենացու ստեղծած Հարության Հարցնում կատարելով որոշ հավելումներ, կազմել է նաև Համբարձման հին կարգը, որը նույնպես ընդգրկում է Հարության երգեր: Տեղին է հիշել, որ Թիրակացին հեղինակել է նաև «Ի Զատիկն Տեսուն» տոմարագիտական երկը²...

Ասենք նաև հետևյալը: Իր մեծարժեք տիեզերագիտական-

¹ Ս. Ամատունի, Նշված աշխատ., էջ 102-103: Ամատունու կարծիքով, թերևս Լամբրոնացին է հեղինակել Համբարձման պարականն Օրհնությունը, որ պահպանվել է խիստ պակասավոր:

² Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Թիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 292-299:

տոմարագիտական աշխատություններից մեկը Անանիա Ծիրակացին ստեղծել է Անաստաս Ա Ակոռեցի կաթողիկոսի (661–667) հանձնարարությամբ¹: Համոզված ենք, որ Համբարձման կարգն էլ Ծիրակացին կազմել է կաթողիկոսի պատվերով և նրա արտոնությամբ ընդգրկել պաշտոնական ծիսարանի՝ Կցուրդարանի մեջ: Անաստաս կաթողիկոսը հետևելով իր նախորդին՝ Ներսես Տալեցուն, շարունակել է բարեկարգել և համալրել օրհներգերի ժողովածուն, հանձնարարելով Ծիրակացուն հարստացնել հատկապես Հարության կարգերը և առանձին կարգ հատկացնել Համբարձման տոնին:

Նկատենք, որ Կցուրդարան-Ծարակնոցը ստեղծվել, համալրվել ու բարեկարգվել է մեր Եկեղեցու գերագույն առաջնորդների նախաձեռնությամբ, ինչը միանգամայն բնական է: Կցուրդարանի նախնական մասը Մեսրոպ Մաշտոցի հետ մեկտեղ ստեղծել է Սահակ Պարթևը: Ծիսարանը Խորենացու հորինած կարգերով համալրվել է Գյուտ Արաբեզացի կաթողիկոսի հանձնարարությամբ: Ապա Հովհան Մանդակունի կաթողիկոսն ինքը որոշ նոր կարգեր է ներմուծել և Ստեփանոս Սյունեցու միջոցով իրագործել ծիսարանի առաջին խմբագրությունը: 7-րդ դարի սկզբին Կցուրդարանում Հոփսիսմյանց կարգն է հաստատել Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսը: Այնուհետև ժողովածուն Բարսեղ Ծոնի միջոցով բարեկարգել է կաթողիկոս Ներսես Տալեցին: Եվ իր նախորդի գործն, ահա, Ծիրակացու միջոցով շարունակել է Անաստաս կաթողիկոսը: Այդ գործընթացը շարունակվել է նաև հետագայում...

Ծիրակացու հեղինակած Համբարձման կարգը, որ ընդգրկում է բացառապես Հարության երգեր, հորինված է Մովսես Խորենացու համապատասխան օրհներգերի անմիջական ազդեցությամբ: Առհասարակ Խորենացին Ծիրակացու համար եղել է չափազանց մեծ հեղինակություն: Հատկապես նրա Պատմությունը, ինչպես նկատել է Մ. Աբեղյանը, «Անանիայի սիրած գիրքն է եղել»², որի ազդեցությամբ է Ծիրակացին շարա-

¹ Տե՛ս Յովհաննես կաթողիկոս, Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 92: Ա. Մաթևոսյան, Անանիա Ծիրակացու «Բննիկոնը», «Լրաբեր» ԳԱ, 2002, թիվ 7, 8:

² Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Գ, էջ 417:

դրել իր ինքնակենսագրությունը: Իր «Մովսէս Խորենացույ եւ Անդրէասի» պատմագրական երկի առաջին մասը նա բառացիորեն քաղել է Պատմահոր գործից: Ծիրակացին թերևս հավելել-խմբագրել է Խորենացու «Աշխարհացոյցը», ինչի հետևանքով այդ աշխատությունը վերագրվել է նաև նրան: Խորենացու օրհներգերը հավելելու հետևանքով է նաև, որ որոշ աղբյուրներում Ծիրակացուն են վերագրվել Քերթողահոր երգերը...

Գտնվելով Խորենացու լեզվի ու ոճի ազդեցության տակ, Ծիրակացին, որ հանճարեղ գիտնական էր, բայց՝ նվազ օժտված բանաստեղծ, իր հեղինակած օրհներգերում աչքի չի ընկել ինքնատիպությամբ ու գեղարվեստական մակարդակով: Բերենք մեր կարծիքով ամենահաջողված հատվածը.

*Այսօր Խոցեալն ի տիգողէն
համեղ մարմնովրն քաղցրացոյց ըզճաշակացն ըզդատնութիւն.
ամենա՛յն գործք Տեսուն, ըզՏէ՛ր օրհնեցէք:*

*Այսօր ամպ լուսոյ սիւն գործեալ ի հրալից վիմին,
պահապանքըն պակուցեալ ի հրակիզմանէ լուսոյն.
ամենա՛յն գործք Տեսուն, ըզՏէ՛ր օրհնեցէք...*

Անանիա Ծիրակացուց հետո հայ բանաստեղծության ասպարեզում հանդես է եկել **Դավթակ Քերթողը**: Նա գործել է Աղվանքի Զվանջի թագավորի պալատում: Վերջինիս եղերական մահվան կապակցությամբ (670–680) Դավթակը գրել է իր նշանավոր Ողբը, որը մեզ հայտնի առաջին հայ արտասպաշտամունքային բանաստեղծությունն է և առաջին պատմական ողբը: Բնականաբար այս ստեղծագործության վրա առկա է օրհներգության ազդեցությունը, ինչն առաջին հերթին վկայում է այն, որ հեղինակը Կոմիտաս Աղցեցու «Անձիք նուիրեալք»ի հետևությամբ ստեղծել է հայոց այբուբենը կապակցող ակրոստիքոս («ըստ ալփաիտտաց զլիսակարգութեանց»): «Իր դարի

համար շատ բնական է,– գրում է Մ. Աբեղյանը,– որ մեր այս բանաստեղծի քերթվածը նույնպես տոգորված լինի կրոնական իդեոլոգիայով ու Ս. Գրքով և հորինված լինի հոգևոր երգի ձևով: Բայց, ինչպես էլ լինի, դա կրոնական երգ չէ»¹:

Օրիններգության ասպարեզում հաջորդ խոշոր բանաստեղծ-երաժիշտը Սահակ Գ. Ջորոփորեցի (Ջորափորեցի) կաթողիկոսն է (677–703): Աշակերտել է ժամանակի ականավոր մանկավարժ, մատենագիր Թեոդորոս Քոթենավորին: Գահակալել է Հայաստանի համար չափազանց ծանր ժամանակաշրջանում, երբ երկիրը կքում էր արաբա-բյուզանդական հակամարտությունների բեռան ներքո: Կաթողիկոսն ըստ ամենայնի պայքարել է Հայ Եկեղեցու ինքնության պահպանման համար: Հեղինակել է բազմաթիվ եկեղեցական կանոններ, ճառեր: Մեծ է Ջորոփորեցու ավանդը հատկապես օրիններգության ասպարեզում: Հայրապետի իրավասությամբ նա կարգավորել է եկեղեցական մի շարք տոներ և օրիններգերի նոր կարգեր է ներմուծել Կցուր-դարան ծիսարանում:

Ձեռագրական աղբյուրները գրեթե միաձայն Սահակ Ջորոփորեցուն են վերագրում Խաչի և Եկեղեցու կարգերը. «Սուրբ Խահակ Ջորափորոյ, որ գնաց ընդդէմ տանկաց՝ զԽաչին, զԵկեղեցույ»²: Այդ կարգերն են կազմում Շողակաթին, Սուրբ Խաչի նավակատիքին, Խաչվերացի օրերին, Վարագա Խաչին և Խաչի գյուտին վերաբերող երգաշարքերը, որոնց մեջ ընդգրկված երգերի մեծ մասի հեղինակն է Ջորոփորեցին³:

Ինչպես նկատել է Ն. Թահմիզյանը, Ջորոփորեցու օրիններգերը «սկզբնապես այլ, մեզ համար այժմ անծանոթ դասավորություն են ունեցել, որ հետագայում խախտվել է»⁴: Հիրավի, Օարակնոցը վերախմբագրվելիս նշված կարգերից դուրս են մնա-

¹ Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Գ, էջ 410:

² «Շարական», էջ Բ: տե՛ս նաև Ս. Ամատունի, Նշված աշխատ., էջ 120: Հ. Անապան, Հայկական մատենագիտություն, հտ. Ա, էջ LXVII–LXVIII:

³ Տե՛ս Գ. Աւետիքեան, Բացատրություն, էջ 482, 505, 535, 539:

⁴ Ն. Թահմիզյան, Սահակ Ջորոփորեցին և նրա ավանդը հայ մասնագիտացված երգաստեղծության զարգացման մեջ, «Պատմա-բանասիրական հանդես», 1982, թիվ 1, էջ 130:

ցել Ջորոփորեցու մի շարք երգեր, և կատարվել են բազմաթիվ հավելումներ:

Կանոնական Շարակնոցում Շողակաթի և Խաչի նավակատիքի կարգերում պակասում են Մեծացուցե, Մաշու և Համբարձի երգերը:

Խաչվերացի առաջին (կիրակի) օրվա կարգում պակասում է Մեծացուցե¹: Այս կարգի վերջում մեր կարծիքով Ջորոփորեցին ինքը ընդգրկել է երկու երգ, որոնք հնագույն ժամերգեր են: Երկրորդ երգը Ալելու է, որի երկրորդ տունը կազմված է Դսադմոսի 7-8-րդ տների հիման վրա, ինչը վկայում է, որ այն նախնական կցուրդ-երգ է: Մենք այդ երկու երգերի հեղինակ ենք համարել Սահակ Պարթևին՝ հիմք ընդունելով ձեռագրական այն վկայությունը, թե «ՋԽաչին կարգն և զԵկեղեցուն... սուրբ Սահակ Պարթևն ասաց»²: Խոսքն, անշուշտ, Խաչի հնագույն երգերի մասին է, որոնցից երկուսը Ջորոփորեցին հարկ է համարել ընդգրկել իր երգերի շարքում՝ դուրս բերելով ժամագրքից:

Խաչվերացի երկրորդ օրվա կարգի ՏԵՐ յերկնիցը («Գաւազան գօրութեան»), որ բաղկացած է հինգ տնից, հետագայում այլ հեղինակի կողմից լրացվել է երեք նոր տներով³:

Երրորդ օրվա կարգն ամբողջությամբ բաղկացած է միայն Օրհնութիւններից, որոնցից առաջինի («Խաչն կենարար») հեղինակը Գրիգոր Մագիստրոսն է, իսկ մյուսը՝ «Սրբութիւն սրբոց» սկսվածքով (երեք պատկեր), հեղինակել է Ստեփանոս Ապարանեցին (Մոկացի)⁴: Վերջինիս ակրոստիքոս-օրհներգը որոշ ձեռագրերում ընդգրկված է Խաչի ութերորդ օրվա կար-

¹ Տե՛ս Գ. Աւետիքեան, Բացատրութիւն, էջ 507-508: Պահպանվել է «Մեծացուցե Եկեղեցույ» խորագրով մի անվավեր շարական, որը թերևս ժամանակին գտնվել է Խաչի և Եկեղեցու այն կարգերից մեկում, որտեղ այժմ (կանոնական Շարակնոցում) չկա Մեծացուցե (տե՛ս Ս. Ամատունի, Նշված աշխատ., էջ 118):

² Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հտ. Ա, էջ LXVI:

³ Այդ հավելյալ տները հրատարակել է Ս. Ամատունին (էջ 120): Դրանք, մեր կարծիքով, հետսամուտ են և ոչ թե բնագրից կրճատված:

⁴ Այս Օրհնութիւնը վերագրվել է նաև 8-րդ դարի մատենագիր Ստեփանոս Սյունեցուն, ինչը միանգամայն անընդունելի է:

գում, և Օրհնութեանը հաջորդել է պարականոն դարձած «Ճանազայթ փառաց» սկսվածքով Հարցնը՝ իր կազմով, որն, ըստ Ս. Ամատունու, թերևս հորինել է Ստեփանոս Ապարանեցին¹: Սա մեզ համար լիովին ընդունելի է:

Ձեռագրերում պահպանվել են նաև երրորդ օրվա կարգում ընդգրկված և նույնպես պարականոն դարձած Մանկունք և Ճաշու երգեր²: Դրանցից մեկ-երկուսի հեղինակը ևս գուցե Ջորոփորեցին է. բայց սա մեզ համար խիստ երկբայելի է: Ելնելով այս ամենից, նշենք, որ կանոնական Ծարակնոցում, փաստորեն, խնդրո առարկա կարգում չկան Ջորոփորեցու հեղինակած երգեր:

Չորրորդ օրվա կարգում պակասում են Օրհնութիւնները: Իսկ Ողորմեան հեղինակել է Աշոտ Բագրատունին³: Այս կարգում ևս ժամանակին եղել են Մանկունք և Ճաշու երգեր⁴, որոնցից մեկ-երկուսն էլ թերևս նույնպես հեղինակել է Ջորոփորեցին:

Հինգերորդ օրվա կարգը բաղկացած է Օրհնութիւնից (երկու պատկերով) և մեկ Ճաշու երգից: Բացակայում է Հարցնը՝ իր կազմով: Այս կարգում ժամանակին եղել է ևս մի Ճաշու երգ («Յահել ձայնէն Յիսուսի»), որ նույնպես հրապարակել է Ս. Ամատունին⁵:

Վեցերորդ օրվա կարգի Հարցնը հեղինակել է Ներսես Ծնորհալին: Որոշ ձեռագրերում պահպանվել են այս կարգին վերաբերող մեկական Ողորմեա, Տէր յերկնից, Ճաշու և Մանկունք⁶: Դրանք (կամ մի մասը) ևս հավանաբար պատկանում են Ջորոփորեցուն:

Յոթերորդ օրվա կարգի համար որոշ ձեռագրերում առկա են ևս մեկական Մանկունք և Ճաշու երգեր⁷, որոնք, մեր կարծիքով, հետսամուտ են:

¹ Տե՛ս Ս. Ամատունի, Նշված աշխատ., էջ 129–130:

² Տե՛ս նույն տեղում, էջ 121–122:

³ Այս օրհներգը վերագրվել է նաև Սահակ Ջորոփորեցուն և Գրիգոր Մագիստրոսին:

⁴ Տե՛ս Ս. Ամատունի, Նշված աշխատ., էջ 122–123:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 123–124:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 124–126:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 126–128:

Վարազա Խաչի կարգի Հարցնը և Մեծացուցէն հեղինակել է Ներսէս Շնորհալին¹: Այս կարգում ժամանակին ընդգրկված են եղել նաև մեկ այլ Օրհնութիւն, մի Մանկունք, մի Մաշու և մի Համբարձի, որոնց մի մասի հեղինակը թերևս դարձյալ Ջորոփորեցիս է²:

Խաչի գյուտի կարգն ավարտվում է Տէր լերկնիցով: Այն բաղկացած է հինգ տնից, որոնք հողում են մեր այբուբենի առաջին հինգ տառերը: Հետագայում անհայտ հեղինակի կողմից հավելվել է Ջ-Ժ տառերով սկսվող ևս հինգ տուն³: Մեկ այլ հեղինակ հավելել է Ը տառից մինչև այբուբենի վերջին՝ Ք տառն ընդգրկող տներ⁴: Այդ հավելումները դուրս են մնացել կանոնական Շարակնոցից:

Այսպիսով, ուրեմն, Սահակ Ջորոփորեցին հեղինակել է Խաչին և Եկեղեցուն ձևված օրհներգերի 11 կարգեր: Դրանք ժամանակի ընթացքում փոփոխվել են ու հավելվել նորանոր երգերով: Մեր հաշվարկներով, կանոնական Շարակնոցի այդ կարգերում առկա երգերից շուրջ հինգ տասնյակը հեղինակել է Սահակ Ջորոփորեցին: Չենք հաշվում այդ կարգերից դուրս

¹ Տե՛ս Ն. Թահմիզյան, Ներսէս Շնորհալին, էջ 39: Այս կարգի Օրհնութիւնը վերագրվել է նաև Ներսէս Գ. Տաչեցուն, ինչը անհավանական է: Ընդունելի չէ նաև այն կարծիքը, թե Ջորոփորեցին է հեղինակել Դավիթ Դվնեցուն ձևված օրհներգը:

² Տե՛ս Ս. Ամատունի, Նշված աշխատ., էջ 131-133:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 134: Տե՛ս նաև Գ. Աւետիքեան, Բացատրություն, էջ 542-543:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 134-137: Ըստ Ամատունու, այս տներում «Շնորհալու գրած շարականներից հատուածներ կան. թերես հեղինակն է Շնորհալին»: Ինչպես «Գաւազան գօրութեան» Տէր լերկնիցի պարագայում, այս անգամ էլ Թահմիզյանը կարծում է, թե կատարվել են ոչ թե հետագա հավելումներ, այլ կրճատումներ (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1982, թիվ 1, էջ 133-134): Համոզված ենք, որ տվյալ դեպքում ևս կատարվել են հավելումներ. այդ են վկայում որոշ հանգամանքներ: Նախ. Ջորոփորեցու բազում օրհներգեր հնգատուն են: Ուրբաթ օրվա կարգի Օրհնութիւնն էլ բաղկացած է հինգ տնից, որոնք նույնպես հողում են այբուբենի առաջին հինգ տառերը: Եվ ամենակարևորը, Խաչի Գյուտի կարգի Տէր լերկնիցի երկու հավելումներում առկա են Ը-Ժ տառերը կապակցող տներ, որոնք իրարից միանգամայն տարբեր են:

մնացած և պարսկամոն դարձած երգերը, որոնց մի մասի հեղինակը մուլնպես, ինչպես նշեցինք, հավանաբար մեր այս օրհներգու-կաթողիկոսն է...

5-րդ դարում արդեն մեր Եկեղեցին, անկասկած, նշել է Խաչին և Եկեղեցուն նվիրված տոներ: Այդ են վկայում ժամագրքում առկա համապատասխան հնագույն երգերը:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Մովսես Խորենացին այլ առիթներով գրած իր բազում օրհներգերում անդրադարձել է Սուրբ Խաչին: Դրանով Քերթոդահայրն առաջին հերթին նպատակ է ունեցել հակահարված տալ նեստորական աղանդին, որը ոչ միայն չէր ընդունում Մարիամի Աստվածածին լինելը, այլև Քրիստոսի Խաչի սրբությունը...

Որոշակի է, որ 5-րդ դարում նշվել է Հին Տապանակի և Նոր Ուլասի (Եկեղեցու) տոներ, որին նվիրված օրհներգերի կարգ է ստեղծել Հովհան Մանդակունին: Այդ ժամանակ, թերևս, արդեն նշվել է նաև Ծողակաթի տոներ: Սակայն այդ տոնին ձոնված օրհներգերի առանձին կարգը ստեղծվել է ավելի ուշ՝ Սահակ Զորոփորեցու կողմից¹:

Տեսանք, որ 7-րդ դարում նշվել է նաև Աշխարհամատրան (Ընդհանրական Եկեղեցու) տոներ, որի համար օրհներգերի կարգը հավանաբար ստեղծել է Բարսեղ Ծոնը:

Խաչի (կամ Եկեղեցու) նավակատիքի տոներ, համոզված ենք, որ ի սկզբանե նշել է մեր Եկեղեցին: 4-րդ դարում, երբ Կոստանդինոս կայսեր մոր՝ Հելիեն թագուհու ջանքերով հայտնաբերվեց Տիրոջ Սուրբ Խաչը, թագուհին «ես շինել զեկեղեցի Յարութեան ի Սուրբ Գողգոթա. եւ կայսերական հրամանաւ ժողովեցան յԵրուսաղէմ եպիսկոպոսունք մերձակայ տեղաց եւ մեծահանդէս տօնախմբութեամբ կատարեցին զնաւակատիս եկե-

¹ Ըստ Գ. Ավետիքյանի, մի ձեռագիր Ծարակնոց այդ կարգն ընծայել է Հովհան Մանդակունուն (տե՛ս Գ. Աւետիքեան, Բացատրութիւն, էջ 482):

ղեցույն... յայնմ ժամանակէ հանդիսաւոր տօն կատարէ եկեղեցին Երուսաղէմի ամի-ամի, ի նմին աւուր մկրտութիւն առնելով եւ զուօ օր հաշիւս ողորմութեան ժողովելով. որ առ հինսն յերեսելի տօնս միայն լինէր»¹:

Բուն Խաչվերացի տոնի կապակցությամբ էլ Ավետիքյանը գրել է. «Պատճառք տօնի վերացման Խաչին՝ յոմանց կարծի լինել երեսումն ճշմանի Խաչին՝ եղեալ առ մեծն Կոստանդիանոս ի պատերազմելն ընդ զօթաց. զոր եւ նա դրօշակ արարեալ զօրաց իւրոց, յաղթեաց թշնամեաց. ի յիշատակ այսր կարգեցաւ, ասեն, տօն Խաչվերացին: Այլք ասեն՝ սահմանեալ ի յիշատակ գիտի պատուական Խաչին ձեռամբ Հեղինեայ թագուհույն»²:

Այս երեսելի տոներն, անշուշտ, չէր կարող շրջանցել առաջին քրիստոնյա պետության Եկեղեցին և չնշեր ի սկզբանէ: Սակայն, ինչպես Օղակաթի, այնպես էլ Սուրբ Խաչի (Եկեղեցու) նավակատիքի և Խաչվերացի օրերին նվիրված օրհներգերի առանձին կարգերը ստեղծվել են ավելի ուշ՝ դարձյալ Սահակ Ջորոփորեցու ձեռքով:

7-րդ դարում է հաստատվել Վարագա Խաչի տոնը՝ Ներսես Օհնող կաթողիկոսի նախաձեռնությամբ: Դա կատարվել է այն բանից հետո, երբ շուրջ 660 թվականին Վարագա լեռան վրա հայտնվեց Սուրբ Խաչի լուսեղեն պատկերը³: Այդ տոնի կապակցությամբ ևս օրհներգերի հատուկ կարգ է ստեղծել Ջորոփորեցին:

Թերևս մեր այս օրհներգու-կաթողիկոսն ինքն է սահմանել Խաչի գյուտի տոնը, որի առթիվ գրել և Կցուրդարան է ներմուծել նաև այդ տոնին նվիրված օրհներգերի կարգը: Դարձյալ

¹ Գ. Աւետիքեան, Բացատրութիւն, էջ 502-503:

² Նույն տեղում, էջ 503: Խաչվերացի տոնի սկզբնավորումը հասցվում է քրիստոնեության նախնական շրջանին, քանի որ Խաչը վերացնելու (բարձրացնելու) առաջին արարողությունը կատարել է Հակոբոս առաքյալը (Տյառնեղբայր): Վերջինս եղել է Երուսաղեմի առաջին եպիսկոպոսը և ի տես ժողովրդի բարձրացնելով խաչանշանը՝ օրհներգել է այն: Այս կապակցությամբ տե՛ս նաև Ա. Տիգրանեան, Խաչվերացի տօնի աւանդութիւնները, «Գանձասար», Զ, 1996, էջ 110-131:

³ Մանրամասն տե՛ս Մ. Օրմանեան, Ազգայատում, հտ. 1, էջ 739-741:

վկայակոչենք Գ. Ավետիքյանին. «Մարթ է խնդիր առնել, արդեօք առաջնորդը Հայոց յինքեա՞նց սահմանեցին յատուկ սօճել զԽաչգիտն, թէ այլոց եկեղեցեաց ընկալան: Անմարթ է ի Յունաց ասել առեալ, զի նոքա չունին որպէս ասացաք: Այլն ո՛չ ի Հռովմայեցոց, վասնզի առաջիկայ շարականս ի հնոց անտի յօրինեալ է, որպէս եւ կազմութիւն ցուցանէ. եւ եթէ համարիցիմք Սահակայ կաթողիկոսին՝ որպէս կարծի սովորաբար, զհետ գայ, թէ յեթներորդ դարուն արարեալ էր, յորում ժամանակի Հռովմայեցիք չեւ եւս սահմանեալ էին սօճ: Ապա մնայ ասել, թէ կա՛մ յանձանց սահմանեցին զսօճս, եւ կա՛մ թերեւս յեկեղեցոյ Շրուսաղէմի կայր սովորութիւն, յորմէ ընկալան եւ Հայք»¹:

Այս կապակցությամբ մեջբերենք նաև Ն. Թահմիզյանի հետևյալ դատողությունը. «Եթե նույնիսկ մի կողմ դնենք նոր տոն հաստատած լինելու հարցը, դարձյալ պարզ է, որ թեկուզ արդեն ընդունված և կամ ընդհանրացող տոների համար նոր երգեր հորինելով՝ դրանց կատարման կարգը ևս սահմանած լինել հեղինակը, որը ոչ այլ ոք էր, քան նույն ինքը կաթողիկոսը»²:

Այսպիսով, Սահակ Զորոփորեցին կարգավորել է Սուրբ Խաչին նվիրված հին և նոր տոները՝ հեղինակելով ու հաստատելով համապատասխան օրհներգերի կարգեր:

Ինչո՞ւ էր 7-րդ դարում մեզանում այսքան ծավալվել Սուրբ Խաչի պաշտամունքը: Սա ունի երկու հիմնական պատճառ: Մեկը, այսպես ասած՝ պատմական, մյուսը դավանաբանական է:

Այն ժամանակ, երբ հայոց հայրապետական զահր ժառանգեց Եզր Փառաժնակերտցին (630-641), պարսից արքա Խոսրով Ափարվեզի կողմից ավարտված խաչափայտը Հերակլ կայսրը

¹ Գ. Ավետիքեան, Բացատրություն, էջ 539:

² «Պատմա-բանասիրական հանդես», 1982, թիվ 1, էջ 131:

Հայաստանի տարածքով վերադարձրեց Երուսաղեմ: Այս իրողությամբ «առաել հոչակելի եղև տօն վերացման Խաչին»¹:

7-րդ դարում Հայաստանում Խաչի պաշտամունքի ծավալմանը նպաստեց նաև Վարագա լեռան վրա խաչապատկերի երևումը:

Իր ինքնուրույն դավանանքը վաղուց ի վեր հաստատած Հայ Եկեղեցին ձգտել է նաև այս կամ այն կերպ հայ իրականությանն առնչակցել համաքրիստոնեական խոշոր սրբությունները: Ըստ այդմ, չափազանց կարևորվել է Քրիստոսի Խաչը Հայաստանի տարածքով գերեդարձելու իրողությունը: Իսկ ազգային ավանդության հիման վրա խաչափայտի մի մասունքը ամփոփվել է Վարագա լեռան վրա, որտեղ և այն հայտնվել է լուսեղեն այուներով...

Նշեցինք, որ դեռևս 5-րդ դարում Մովսես Խորենացին (նաև Ստեփանոս Սյունեցին) բազմիցս հիշատակել է ամենագոր և կենսատու Սուրբ Խաչը ի հակադրությունն անստորականության: Ավելացնենք, որ նրա ժամանակակից Դավիթ Քերթոլը ևս նույն նպատակով հեղինակել է Սուրբ Խաչին ձոնված մի ներբողյան:

7-րդ դարում Հայաստանում դեռևս շարունակվում էր լայնորեն տարածվել անստորականությունը (և քաղկեդոնությունը), որի դեմ հանդես եմ եկել ժամանակի գրեթե բոլոր հայ հոգևոր առաջնորդներն ու ազգային դավանանքի նախանձախնայի հոգևորականները: Դրանցից էր նաև Ջորոփորեցու ուսուցիչ Թեոդորոս Քոթենավորը, որն, ի թիվս այլ երկերի, նույնպես հեղինակել է Սուրբ Խաչին ձոնված ներբողյան:

Հատկապես 680 և 692 թվականներին Կ.Պոլսում գումարված ժողովներից հետո սրվել էին հայ և հույն եկեղեցիների դավանաբանական վեճերը: Հուստինիանոս II կայսրը ձգտելով միավորել երկու եկեղեցիները՝ իր մոտ է հրավիրել Սահակ Ջորոփորեցի կաթողիկոսին և մի շարք նշանավոր նախարարների ու հոգևորականների, որոնց պատանդ պահելով՝ հարկադրել է ընդունել քաղկեդոնություն: Սակայն կայսեր մահից հետո վերադառնալով հայրենիք՝ հայոց հայրապետը նգովել է քաղկե-

¹ Գ. Աւետիքեան, Բացատրութիւն, էջ 504:

դոնությունն ու նեստորականությունը, որի դեմ գրած մի ծավալուն երկում վերահաստատել ու հիմնավորել է Հայ Եկեղեցու դավանանքը: Կաթողիկոսի հականեստորական դիրքորոշման վառ արտահայտությունն են նաև Սուրբ Խաչին ու Եկեղեցուն նվիրված նրա օրհներգերը:

Այսպիսով, ուրեմն, **Ջորոփորեցու օրհներգերի կարգերն առավելապես հետապնդել են դավանաբանական նպատակ:** Եվ իր նպատակին հասնելու համար օրհներգում ձգտել է գործի դնել իր բանաստեղծական-երաժշտական շնորհները: **Ջորոփորեցու օրհներգերը, «նույնիսկ որպես լոկ գրական գործեր, պարզորոշ վկայում են, որ նրանց հեղինակը եղել է իմացական բարձր կարողությունների, ինչպես և ջերմագույն ու ազնվագույն զգացումներով առլցված սրտի տեր տաղանդաշատ մի երգիչ», – գրում է Ն. Թահմիզյանը¹:** Երաժշտագիտական քննությունը վերջինիս բերել է այն եզրակացության, որ մեր այդ բանաստեղծ-կաթողիկոսը «նաև անցյալի մեր ամենավավերական երաժիշտներից է, և երբ խորամուխ ենք լինում նրա շարականների մեղեդիական բաղադրիչի բարեմասնությունների մեջ, հարկավ ավելի ևս բարձրանում է նրանց արժեքը»²:

Խաչի և Եկեղեցու օրհներգերի կարգերն ստեղծելիս **Ջորոփորեցին խարսխվել է Սուրբ գրոց, մեկնողական, դավանաբանական գրականության, Գրիգոր Լուսավորչի տեսլիքի (Շողակաթի կարգում), Ժամագրքի, Դավիթ Քերթոռի ու Թեոդորոս Քոթեմավորի հիշյալ ներբողյանների, նախորդ օրհներգուների (հատկապես Խորենացու) երգերի վրա:** Ելնելով սրանից, Մ. Աբելյանը եզրակացրել է թե հեղինակը «չի կարողանում մեկնաբաններից ընդունած պատկերների շրջանակից դուրս գալ և իր համար արտահայտության նոր, կենդանի զգացած ձևեր ստեղծել: Նրա գործածած մեմանություններն ու փոխաբերությունները շինծու են, մութ ու անբնական: Եվ այս ամենի հետևանքն այն է լինում, որ մեկնաբանական շարականների մեծ մասը բանաստեղծական ոչ մի արժեք չունեն, դրանք Խաչի

¹ «Էջմիածին», 1980, ԺԱ, էջ 38:

² Նույն տեղում, էջ 39: Տե՛ս նաև Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին, էջ 177–186:

գրույցների կցկտուր պատմվածքներ են երգի ձևով»¹: Անշուշտ, այս գնահատականը հեռու է իրականությունից: Բերենք Ն. Թահմիզյանի այս կապակցությամբ կատարած հակաճառությունը, ըստ որի «Աբեղյանը չափազանց շեշտեց Խաչի և առհասարակ մեր հին շարականներում հանդիպող պատկերների, համեմատությունների և դարձվածաբանության՝ Ս. Գրքից, դավանաբանական գրականությունից, մեկնություններից, ճառերից ու նմաններից փոխառնված լինելու հանգամանքը, արտահայտության տարբեր ձևերի կարծես պատրաստի, ընդունված, ընդհանրացած լինելու պարագան և այլն: Մինչդեռ ավելի ճիշտ ու արդյունավետ մոտեցման դեպքում հարկ կլիներ մշտել, որ միջնադարում առհասարակ դա այդպես է եղել ամեն տեղ, և որ չնայած դրան, հոգևոր երգերի հեղինակներից տաղանդավորագույնները մնան կաշկանդվածության պայմաններում իսկ հնար են գտել արվեստի իսկական գործեր ստեղծելու և, դրանով իսկ, իրենց ժամանակի բանաստեղծական մշակույթը ներկայացնելու»²: Սա միանգամայն արդարացի է Սահակ Ջորոփորեցու պարագայում ևս, և դրանում ավելի կհամոզվենք մրա կոնկրետ օրիներգերին անդրադառնալիս:

Իր օրհներգերում Սահակ Ջորոփորեցին, ըստ էության, հանրագումարի է բերել Սուրբ Խաչին ու Եկեղեցուն մվիրված մախորդ գրականության փորձը՝ անցկացնելով այն իր՝ 7-րդ դարի հայ մարդու և բանաստեղծ-երաժիշտի, իմացական ու զգացական ընկալումների միջով:

Նախ անդրադառնանք Եկեղեցուն ձոնված օրհներգերին:

Էջմիածնի Մայր Տաճարի նավակատիքի տոնին է մվիրված Շողակաթի կարգը: Եկեղեցուն ձոնված երգեր կան նաև Խաչի նավակատիքի և Խաչվերացի կարգերում: Ինչպես նկատել է Գ. Ավետիքյանը, «ի կանոնիս նաւակատեաց թէպէտ եւ տօնն կա-

¹ Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Գ, էջ 554-555:

² «Պատմա-բանասիրական հանդես», 1982, թիվ 1, էջ 134-135:

տարի ի պատճառ շինությունն Ախթալայի եկեղեցույ կամ տաճարի, սակայն բանքն հային առաւել յիմանալի կամ ի բարոյական Եկեղեցին, այսինքն՝ առ ժողով հաւատացելոց. եւ որ ինչ պատշաճի միումն, ընծայի եւ միւսումն փոփոխակի»¹:

Այսպիսով, ի դեմս իրական-նյութական եկեղեցու, Ջորովորեցին առավելապէս երգել է «հոգետոր-բարոյական» Եկեղեցին, իբրև Դշխո և Դուստր Սիոնի, «բնակարան հրեշտակաց», «մարդկան քաւարան», Տիրոջ փառքի տաճար, սրբության խորան:

Բանաստեղծի գործածած մակդիրների ու փոխաբերությունների մի մասը վերաբերում է Հարս-Եկեղեցու և Փեսա-Քրիստոսի պատկերաբանությանը: Ըստ այդմ, Եկեղեցին ոսկեհոտ խաչի նշանով պատկերված անարատ Հարս է, որին դիմելով՝ օրհներգուն ասել է.

*Ջուարճացի՛ր, Հա՛րսն անարատ, ըզքողարկեալ վայելչապէս,
զարդարեա՛ հանդերձ փառօր
եւ ե՛լ ընդ առաջ երկնատր Փեսային...*

Եկեղեցուն նվիրված օրհներգերը կրում են նաև Ոսկեդարից սկզբնավորվող մեր լուսերգության կնիքը: Լուսեղեն երկնանման խորան և լուսաճեմ բնակարան որակված Եկեղեցուն «շող աստուածեղէն ի չօրէ Լուսոյ ծագեալ»: Լույս-Աստված՝ «պայծառ քան զարեգակն», լուսավորեց Սուրբ Եկեղեցին:

*եւ պարգեւեաց շնորհրս, անապական զգեստրս, պայծառ զարդրս
եւ բոլորեալ պրսակրս անմատոյց լուսոյն...*

Ուստիև մեր օրհներգուն աստվածային լույսով ողողված Սուրբ Եկեղեցուց խնդրում է.

*Պայծառացո՛ր զմանկունըս քո՛
յօրհնաբանութիւն Մագողին ըզշող լուսոյ ի քեզ...
Փայլեցո՛ր զմանկունըս քո, որպէս զարեգակըն...*

Միածին Քրիստոսի լույսի շողի կաթման տեղում է կառուց-

¹ Գ. Աւետիքեան, Բացատրութիւն, էջ 505:

վել Հայոց Մայր Եկեղեցին: Այս կապակցությամբ Ձորոփորեցու հորինած Մանկունքը համարվում է Սուրբ Էջմիածնի Մայրավանքի հիմնը.

*Էջ Միածինն ի Հօրէ, եւ Լոյս փառաց ընդ Արմա.
Չայնք հրնչեցին սանդարամետք անդրնդոց:*

*Տեսեալ զԼոյս մեծ հայրապետին Գրիգորի՝
պատմէր ցընծութեամբ հաւատացեալ արքային.*

*«Եկայք շինեսցուք սուրբ զխորանըն Լուսոյ,
քանզի ի սմա ծագեաց մեզ Լոյս՝ ի Հայաստան աշխարհի»:*

Ինչպես գրում է, Վ. Ներսիսյանը, «Թերևս «Շարակնոցում» դժվար է գտնել մի այլ այնպիսի բարձրարժեք երգ, որ ունենա սույն շարականի հակիրճ հորինվածքը և միաժամանակ օժտված լինի մյուս ընդգրկում բովանդակությամբ»¹: Այստեղ արդեն գործ ունենք ոչ միայն որոշակի-նյութական, այլև ազգային Եկեղեցու հետ, որը միաժամանակ խորհրդանշում է առհասարակ Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին...

Քանակով շատ ավելի են Սուրբ Խաչին նվիրված օրհներգերը: Սրանց մեջ էլ առկա են ավանդական (երբեմն նաև ինքնահմար) մակդիրներ ու փոխաբերություններ, որոնցով պատկերվում է Սուրբ Խաչն իբրև անապական, կենսատու, հրաշակերտ, պատվական նշան, «փրկութիւն տիեզերաց», «գլուխ սուրբ հաւատոյ», «Աթոռ Տէրունեան», «Սեղան սրբութեան», հավատացյալների ապավեն, «Պսակ պարծանաց» և «լոյս հատատութեան», անքննելի խորհրդի ընդունարան, «անպատում Կառք», հավիտենական կյանքի առաջնորդ, «Բանալի արքայութեան»... Այն կենաց փայտ է, որ մահաբեր պտուղի փոխարեն «պտղաբերեց» հավերժական կյանք պարգևած Քրիստոսին:

Սուրբ Խաչը պատկերվում է նաև իբրև հաղթական պայքա-

¹ Վ. Ներսիսյան, Սուրբ Էջմիածինը շարականներում, «Էջմիածին», 2008, Ե, էջ 53: Գրականագետն այստեղ նկատել է, որ շարականի «առաջին տողի ենթակա-ստորոգյալ բաղկացությունը («Էջ Միածինն...») ոմանք թյուրիմացաբար արտաբերում են միասնաբար, «Էջմիածին»՝ մեկ բարդ բառի սկզբունքով, որպես տեղանուն» (Նույն տեղում, էջ 54):

րի միջոց ընդդեմ թշնամու: Նկատի ունենալով նման պատկերներ ընդգրկող որոշ օրհներգեր՝ Մ. Աբեղյանը, որ խստորեն դատափետել էր Ջորջիորեցու բանաստեղծական արվեստը, այդուհանդերձ նկատել է. «Խաչի երգերի մեջ կան մի քանի այնպիսիները, որոնք գեղեցիկ են իրենց խրախուսական աշխուժով... բանաստեղծի սրտից թռչում են առ Խաչը ոգևորության խոսքեր, որոնք լի են հափշտակիչ քնարականությամբ»¹: Գրականագետը կատարում է հետևյալ բնորոշ մեջբերումները.

*Ջորջիուն Սուրբ Խաչի Քո, Քրիստո՛ւ,
որ կանգնեցեր ի փըրկութիւն աշխարհի.
սա՛ պահեսցէ ըզմեզ յամենայն փորձութենէ...*

*Գաւազան գօրութեան ըզԽաչ Քո ետուր մեզ, Քրիստո՛ւ,
եւ սովա՛ յաղթեացուք անօրէն թըշնամոյն:*

*Սա՛ է գէն յաղթութեան՝ սրբեալ արեամբ Որդոյն Աստուծոյ,
եւ սովա՛ յաղթեացուք անօրէն թըշնամոյն:*

Սուրբ Խաչն այսքան զորեղ է, քանի որ նաև «անպարտելի գօրութեան» ընդունարան է, այլև «աշտարակ հօգօր», «պարիսպ ամրութեան», «ախոյեան եւ կնիք յաղթող», «գէն անպարտելի», որն ահով է պատում անգամ «սաւառնաթեւ» սերովբեներին, և որի տեսքից ապստամբողներն «ահիւ սարսեալ դողան և անդնդասոյզ կորնչին»:

Խաչերգությունն էլ երբեմն վերածվում է լուսերգության, քանի որ Լույս-Աստծուն կրած Սուրբ Խաչն ինքը ևս մեծ լույս է, ողորմության լույս, պայծառ, հրաձև նշան, «Պսակ՝ զարդարեալ ի շնորհաց իմանալի լուսոյն», բոցանիշ փայլմամբ «Աշտանակ ոսկի եօթնաջահեան՝ լուսով պայծառացեալ յերկրի», «զարդարեալ ի լուսոյ յերկնից»: Այն «արեգակնակերպ փայլմամբն թափանցիկ լուսովն ի յարեւելից յայտնեալ», «բոցանաճանչ փայլմամբ արեգակնայիցն յաղթէր ճառագայթից», և նրա արեգակնակերպ ճառագայթներից պայծառացավ տիեզերքը, «լուսաւորեցան արարածք ամենայն»... Մարիամ Աստվածածնի նման

¹ Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Գ, էջ 555:

Սուրբ Խաչն էլ համարվել է «Մորենի վառեալ, որ ոչ այրէր»:

Սուրբ Խաչի ներբողին ու փառաբանությանը օրհներգում հաճախ ներհյուսել է իր մաղթանքներն ու խնդրանքները՝ համայնքի անունից: Դրանց շնորհիվ նրա երգերը ձեռք են բերել ջերմ հուզականություն, որ բացահայտում են դաժան փորձությունների ենթարկված ժամանակի հայ մարդու ու հոգևոր առաջնորդի տազնապները:

*... պարըսպեալ՝ պահեա՝ զուխտս հաւատացելոց...
... սա՛ պահեսցէ ըզմեզ յամենայն փորձութենէ...
Սովա՛ւ ըզկեանըս մեր խաղաղացո՛, միա՛յն Բարեգութ...
Սովա՛ւ պահպանեա՛ զժողովուրդըս Քո, Քրիստո՛ւ...
... աղաչեմք, սովա՛ւ, Փրրկի՛չ, պահպանեա՛ զանձինըս մեր:*

Ուշագրավ է, որ մի օրհներգում հեղինակը համայնքից առանձնացրել է իր անձը, ինչն, անշուշտ, դարձյալ ընդհանրական իմաստավորում ունի.

... եւ զի՛ս յուսաւորեա՛ ըզխաւարեալըս մեղօք:

Ինչպէս Շողակաթի, այնպէս էլ Վարագա Խաչին ձոնված օրհներգերի կարգում արժարժվում է նաև «հայկական թեման», քանի որ այդ երկու տոներն էլ զուտ ազգային են: Ահա թե ի՛նչ հպարտությամբ է Ջորոփորեցին նշում Սուրբ Խաչի մասունքի «բնակումը» Վարագա լեռան վրա և ի՛նչ ցնծությամբ է կոչ անում իր հայրենակիցներին՝ երկրպագել այն.

*Սա կամաւ Քո, Քրիստո՛ւ, եւ թեւօք ամենագօր Սուրբ Հոգւոյն
եւ դասուք հրեշտակաց
թոռուցեալ եկաւորի ի լեառըն Վարագայ՝ բնակիլ ի նրմա:*

*Եկա՛յք ժողովո՛ւրդք, երկըրպագեսցուք աստուածային Սուրբ
Նըշանիս,
համբարձե՛ք միաբան ըզձեռնս ձեր ի սրբութիւն
եւ ըզԲնակեալն ի սմա միշտ փառաւորեսցուք:*

Որքան էլ Սահակ Ջորոփորեցին օգտագործել է Սուրբ Խա-

չին և Եկեղեցուն վերաբերող նախորդ բազմաբնույթ գրականությունը և գտնվել դրա որոշակի ազդեցության ներքո, այսուհանդերձ, ինչպես նկատել է Ն. Թահմիզյանը, նրա օրհներգերում «բանաստեղծական ապրումը միանգամայն անկեղծ ու առիճքնող է... զգայական աշխարհը՝ ջերմ ու անմիջական, բովանդակությունը՝ վսեմ, լեզուն՝ հարուստ, մաքուր, հղկված, ձևը՝ կոկ և ավարտուն»: Հատուկ ուշադրության արժանացնելով Ջորոփորեցու տաղաչափական արվեստին, երաժշտագետը եզրահանգել է, որ հայ բանաստեղծության պատմության մեջ նրան «պատկանում է արժանավորագույն տեղերից մեկը»¹:

Ջորոփորեցու օրհներգերը բարձր են գնահատել նաև մեր հին ուսումնասիրողները: Գ. Զարպհանալյանը դրանք համարել է «գերազանց բանաստեղծություններ»², իսկ Մ. Օրմանյանը՝ «մեր եկեղեցական երգերուն ընտրելագույնները»³:

Մի բան որոշակի է, որ **Սահակ Ջորոփորեցին Սուրբ Խաչի և Եկեղեցու մեր խոշորագույն երգիչն է, ընդ որում Էջմիածնի Մայր տաճարի և Վարագա Խաչի առաջին օրհներգուն**: Հայ խաչերգության այս ամենասականավոր ներկայացուցչի բանաստեղծական-երգաստեղծական ավանդույթները շարունակել են հետագա մի շարք երգիչ-երաժիշտներ:

Սահակ Ջորոփորեցու վերաբերյալ մեր խոսքն ուզում ենք ավարտել Խ. Պալյանի հետևյալ տողերով. «Թող չափազանցություն չհամարուի, եթե ասենք, որ քրիստոնեական եկեղեցիներում եւ ոչ մի այլ եկեղեցի չունի Խաչի պաշտամունքին ու փառաբանութեանը նուիրուած այնքան բազում բարձրարուեստ երգեր, շարականներ ու կանոններ, որքան Հայաստանեայց Եկեղեցին... Խաչքարերի կերտման արուեստի մենաշնորհը եղել եւ մնում է մեր ժողովրդինը... Մեր խաչքարերի նման անկրկնելի ու անզուգական են նաեւ մեր խաչի շարականները»⁴:

7-րդ դարում է ապրել **Աշոտ Բագրատունին**: 686–688 թվա-

¹ «Էջմիածին», 1980, ԺԱ, էջ 38–39:

² Գ. Զարպհանալեան, Հայկական հին դպրության պատմություն, Վենետիկ, 1897, էջ 458:

³ Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. 1, էջ 788:

⁴ «Գանձասար», Բ, 1992, էջ 322:

կաններին եղել է Հայոց պատրիկ՝ հաջորդելով Գրիգոր Մամիկոնյանին: Արաքների դեմ 688-ին մղած արշավանքում վիրավորվելով՝ մահացել է և թաղվել Դարույնք բերդաքաղաքում: Հիմնովին վերակառուցել է Դարույնքի Ս. Փրկիչ եկեղեցին՝ «յանուն փրկչական պատկերին, զոր եբեր որդի նորա ի մտիցն արեաւ»¹: Եկեղեցու նավակառուցի առթիվ Աշոտ Բագրատունին գրել է «Ձորս ըստ պատկերի Քում ստեղծեցեր» երգը, որը Սահակ Ձորոփորեցին ընդգրկել է Խաչվերացի կանոնում²:

Ս. Փրկիչ եկեղեցին նորոգած իշխանը, դիմելով մարդկությանը նորոգած Փրկչին, ասել է.

*Ձորս ըստ պատկերի Քում ըստեղծեցեր,
նորոգելով՝ ըզՔեզ տաճարացուցեր,
զնորոգեալս ի մեճ զտաճարս ընկա՛լ Քեզ ի բնակութիւն:*

Հայտնի չէ, թե մեր այս իշխանը հեղինակե՞լ է արդյոք այլ երգեր, սակայն այս մեկն իսկ հավաստում է նրա բանաստեղծական օժտվածության մասին, որի շնորհիվ այդ օրհներգն իր կայուն տեղն է գրավել կանոնական Ծարակնոցում:

8-րդ դարի առաջին խոշոր օրհներգուն նույնպես կաթողիկոս է, որը նոր կարգերով համալրել է Կցուրդարան-Ծարակնոցը: Դա նշանավոր աստվածաբան, փիլիսոփա, քերական և հոեետոր **Հովհան Օձնեցին** է (Իմաստասեր): Գահակալել է 717-728 թվականներին:

Օձնեցին ևս աշակերտել է Թեոդորոս Քրթենավորին: Նա ևս հայրապետական զահր ժառանգելով՝ ըստ ամենայնի ջանացել է ամրապնդել Հայ Եկեղեցու ինքնությունը, կատարել է մի

¹ Վարդան Վարդապետ, Հաւաքումն Պատմութեան, էջ 99:

² Ծարակնոցի ցանկերից մեկում Գրիգոր Մագիստրոսին է վերագրված այդ երգը, «զոր այլք Իսահակայ Ձորափորեցուլ տան» («Ծարական», էջ Բ): Սակայն ապացուցված է, որ հեղինակը Աշոտ Բագրատունին է (տե՛ս Գ. Աւետիքեան, Բացատրութիւն, էջ 521-523):

շարք եկեղեցական բարեփոխումներ, պայքարել հերձվածողության ու աղանդավորության դեմ: Կազմել է «Կանոնագիրք Հայոց» եկեղեցական օրենսդրական ժողովածուն, որպես «լուսաշափղ ճանապարհ առ Աստուած»: Իր ճառերում, թղթերում և այլ երկերում արծարծել է դավանաբանական խնդիրներ, զարկ տվել Հայաստանում խաչապաշտության տարածմանը, ինչպես նաև արտահայտել է իր գեղագիտական ընկալումները...

Ձեռագրերը Հովհան Օձնեցուն են ընծայում չորս Ավագ տոների՝ Գլխաված օրհներգերի կարգերը¹: Ըստ այդմ նա, ինչպես ցույց է տալիս առկա տվյալների քննությունը, հեղինակել է Դավիթ մարգարեի և Հակոբ Տյառնեղբոր, Ստեփանոս Նախավկայի, Պողոս և Պետրոս առաքյալների և Որոտման Որդիների կարգերում ընդգրկված օրհներգերի հիմնական մասը²:

5-րդ դարում Հովհան Մանդակունին և Ստեփանոս Սյունեցին ստեղծել են բոլոր առաքյալներին, մարգարեներին և մարտիրոսներին Գլխաված օրհներգերի առանձին կարգեր, առանց անձնավորման: Հովհան Օձնեցի կաթողիկոսը, որ որոշ բարեփոխումներ է կատարել եկեղեցական ծիսակարգում ու ժամերգության մեջ, ըստ երևույթին ինքն է ներմուծել Սուրբ Ծնունդին նախորդող Ավագ տոները և առանձնակի օրհներգել աստվածաշնչական հիշյալ սրբերին:

Ուշագրավ է, որ առաջին Ավագ տոնը միավորում է Հին և Նոր կտակարանների երկու սրբերի՝ Դավիթ մարգարեին և առաքյալ համարված Հակոբ (Հակոբոս) Տյառնեղբորը: «Բացառիկ եւ իմաստալից երեսոյթ մըն է սա,– գրում է Ծնորհք Արք. Գալուստյանը,– որ ըստ մարմնոյ, Քրիստոսի «նախահայրը» եւ ըստ մարմնոյ Անոր «եղբայրը», այսինքն՝ ազգականը, միասին կը տօնախմբուին, խորհրդանշելու համար Հին և Նոր Ուխտերուն միաձուլումը Քրիստոնէական տնտեսութեան մէջ»³:

¹ Տե՛ս «Ծարական», էջ Բ: **Հ. Անայան**, Հայկական մատենագիտություն, հտ. Ա, էջ LXV–LXVIII: **Գ. Աւետիքեան**, Բացատրութիւն, էջ 120–122:

² Պահպանվել են այդ կարգերին վերաբերող մի շարք պարականոն երգեր (տե՛ս **Ս. Ամատունի**, Նշված աշխատ., էջ 22–28):

³ **Ծ. Արք. Գալուստեան**, Աստուածաշնչական սուրբեր, Երևան, 1997, էջ 88:

Դավիթ մարգարեին և Հակոբ առաքյալին նվիրված կարգում Օձնեցին զուգադրել է երկու «արյունակից սրբերին».

*Յառաջնումն Աստուածահայր անուանեցաւ մարգարէն Դաւիթ,
եւ ի վերջինս Եղբայր Տեառն կոչեցաւ ըսքանչելին Յակոբ:*

Տերը Դավթին ընտրեց «յառաջնորդութիւն Իսրայէլի», իսկ Հակոբին ժառանգություն տվեց «զնոր ժողովորդ՝ զհոգեւոր Իսրայէլ»: Երկուսն էլ հանդես եկան իբրև ճշմարիտ հավատի պաշտպաններ: Դավիթը «հաւատով պարտեաց զանօրէնն ըզԳոռիայթ», իսկ Հակոբը դարձավ Եկեղեցու «պարիսպ շրջապատ»: Քրիստոսն, ուրեմն, նրանց սիրել է ոչ միայն իբրև իր «ազգակիցների», այլև առավելապես այն պատճառով, որ նրանք հաստատեցին «զհիմունս Սուրբ Եկեղեցոյ»: Կարգի Օրհնութեան մեջ հեղինակը դիմելով հավատացյալ համայնքին՝ արել է հետևյալ խրատական հորդորը.

*Ուսարո՛ւք, զարդարութիւն, բընակի՛չք երկրի,
նայեցարո՛ւք ընդ արդարըն Յակոբ,
որ հաճոյ եղէ Աստուծոյ վարութն իւրովք:*

Ծարունակելով նախորդ օրհներգության ավանդույթները՝ Օձնեցին ևս Ոսկեդարից սկզբնավորված լուսերգության հետևորդ է եղել.

*Անակի՛զքն Աստուած, Լո՛ջս ի Լուսոյ...
Որ երջանիկ լուսովըն զուարճանայր մարգարէն Դաւիթ
եւ հոգուվըն վերանայր ի կամարս լուսեղէն...*

Երկրորդ Ավագ տոնը նվիրված է Ստեփանոս Նախավկային: Վերջինս առաջին քրիստոնյան էր, որ զոհվել է հանուն Քրիստոսի (տե՛ս **Գործք**, 9–1): Ստեփանոսին նվիրված օրհներգերի ողջ կարգը ևս հեղինակել է Օձնեցին: Նա Ստեփանոս Նախավկային համարել է «Տունկ անմահ իմանալի դրախտին», «մեր յանմերձեանալի Լոյսըն», «երջանիկ ճառագայթ», «նախաշաւիղ բարեաց ամենայն աշխարհի»: Օրհներգուին հուզել է հատ-

կապես այն իրողությունը, որ Ստեփանոսը լինելով առաջին մարտիրոսը և Քրիստոսի չարչարակիցը, աղոթել է իրեն քարկոծողների փրկության համար: Դա, անշուշտ, քրիստոնեական և աոհասարակ մարդկային առաքինության ու բարության բարձրագույն դրսևորումներից էր: Ուստիև խնդրո առարկա կարգը սկզբնավորող Օրհնութեան մեջ ասված է.

*Նահատակ բարի Քրիստոսի եղեր այսօր ի միջի մերում
եւ մըտեր ի վերնատունըն խորհրդոյ յախտենականի¹:*

Երրորդ Ավագ տոնը նվիրված է Պետրոս և Պողոս առաքյալներին: Վերջիններիս ձոնված օրհներգերի կարգի Օրհնութիւնը (երեք պատկերով), Հարցնը, Ողորմեան և Տէր յերկնիցը հորինել է Օձնեցին: Այդ օրհներգերում էլ զուգորդված են երկու անձինք, որոնց Հայ Եկեղեցին համարել է գլխավոր առաքյալներ: Հիրավի, նրանք երկուսն էլ քրիստոնեական հավատի մեծագույն քարոզիչներն էին, որոնք իրենց կյանքը պսակել են մարտիրոսությամբ: Մեր օրհներգում նրանց համարել է «ամուլք հաւատոյ», «սիւն Եկեղեցոյ», «լուսատուք տիեզերաց», որոնք

*Որպէս զարեզակըն ծագեցան ի յերկրի,
արձակելով զճառագայթս ընդ տիեզերքս¹
լուսատրեցին զաշխարհս ամենայն:*

Շատ գեղեցիկ է նրանց շուրջը ճախրող Սուրբ Հոգու լուսեղեն պատկերը.

*Նմանեալ աղաւնոյ՝ արծաթապատ թեւօքն, ի գոյն ոսկւոյ
ճըշմարիտ Սուրբ Հոգին
եւ լուսազարդ փայլմամբ փարէր ըզնորօք:*

Չորրորդ Ավագ տոնը նվիրված է Որոտման Որդիներ կոչված Հակոբ և Հովհաննես առաքյալներին (տե՛ս **Մարկոս**, Գ,

¹ Այս Օրհնութեան երաժշտագիտական քննությունը տե՛ս **Ն.Թան-միզյան**, Գրիգոր Նարեկացին, էջ 189–192:

17): Հայոց մեջ Գլխադիր առաքյալ կոչված Հակոբը (չշփոթել Հակոբոս Տյառնեղբոր հետ) և Հովհաննեսը (ավետարանիչ), Զեբեդեոսի և Սողոմեի որդիներն էին և Պետրոսի հետ միասին՝ Հիսուսի ամենասիրելի աշակերտները: Այս երկու առաքյալներին ևս ձոնված է օրհներգերի առանձին կարգ, որի Հարցնի, Ողորմեայի, Տէր յերկնիցի և Մանկունքի հեղինակն է Հովհանն Օձնեցին:

Որոտման որդիներին Օձնեցին փառաբանել է հատկապես այն պատճառով, որ նրանք ականատես են եղել Հիսուսի Պայծառակերպությանը և հետագայում դարձել Տիրոջ չարչարակիցը: Լուսերգության փայլուն դրսևորումներից են հետևյալ տողերը.

*Որ զԱնտեսդ յէից, զԼոյսդ անտանելի,
պարագրեալ մարմնով՝ ծածկեցեր,
զոր ի լերիցն արտափայլեալ տեսին Որդիքն Որոտման
ես մաքրեցան անճառ տեսլեսմբ Գերապանծ Լուսոյն:*

Կամ՝

*Որ յանըստուեր ի Լուսոյն ընկալար զծագումըն շնորհաց,
ո՛վ երանելի տէր Յովհաննէս...
Որ փարեցար ըզսարսափելի պարանոցան զանմատոյց
Լուսոյն
ես մաքրեցար, որպէս զոսկի ի հուր,
լուսագարդեալ երեսեցար ի մէջ սրբոցն, որպէս յաստեղս
արեգակրն...*

Այսպիսով, ուրեմն, Հովհանն Օձնեցին, առաջինը լինելով, առանձնակի ներբողել է Դավիթ մարգարեին, Հակոբոս Տյառնեղբորը, Ստեփանոս Նախավկային և չորս առաքյալների: Ընդ սմին, նա դրսևորել է թե՛ իր երաժշտա-բանաստեղծական ունակությունները և թե՛ լավագույնս շարունակել հայ օրհներգության, մասնավորապես լուսերգության ավանդույթները:

Շարակնոցում մեր Եկեղեցու սրբերի դասն անցած մարտիրոսներին պանծացնող Մանկունքներից է Վահան Գողթնացուն ձոնված «Ջարմանալի է ինձ» սկսվածքով երգը: Վահան Գողթնացին եղել է Գողթն գավառի իշխան, որը 737 թվականին գլխատվել է արաբ ամիրապետի հրամանով՝ քրիստոնեական հավատն անուրաց դավանելու համար¹:

Ո՞վ է «Ջարմանալի է ինձ» օրհներգի հեղինակը: Ըստ Գ. Ավետիքյանի, «ասի անգիր ասանդութամբ, թե քոյր երանեալ նահատակին երգեալ իցէ զայս»²: Այդ ավանդությանը քաջատեղյակ Ղ. Ալիշանը Գողթնացու քրոջը հիշատակել է Խոսրովիդոխտ անունով³: Սակայն Հ. Աճառյանի ենթադրությամբ, «այդ անունը հնարել է Ալիշանը, ըստ որում Վահան Գողթնացու հոր անունը Խոսրով էր»⁴:

Ուշագրավ է Ղ. Ալիշանի այն դատողությունը, ըստ որի, եթե «ասանդութիւնն լո՛ւր», ապա օրհներգի հեղինակ կարող էր համարվել կա՛մ Վահանին «հարսնացեալ Սիւնեաց օրիորդը եւ կա՛մ անոնց երկուքին ժամանակակից եւ վկայուած մեծանուն Հայ երգուհի... Սահակդոխտն»⁵: Մ. Օրմանյանը ևս գրել է, որ գուցե Սահակդոխտն է հեղինակել «Ջարմանալի է ինձ» երգը՝ գտնելով, որ «Սահակդոխտի եւ Վահանի մէջ առաջուց հոգեւոր հաղորդակցութիւն եղած ըլլալը շատ հաւանական է»⁶:

Առկա փաստերի քննությունը Գ. Հակոբյանին բերել է այն եզրահանգման, որ «Վահան Գողթնացուն նվիրված «Ջարմանալի է ինձ» շարականը գրել է ոչ թե Խոսրովիդոխտը, այլ Սահակդոխտը»⁷:

¹ Վահան Գողթնացու վկայաբանությունը տե՛ս «Սոփերք Հայկականք», ԺԳ, Վենետիկ, 1854, էջ 11–91: Քննությունը տե՛ս Ղ. Ալիշան, Յուշիկք, հտ. Բ, Վենետիկ, 1870, էջ 129–200: Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Գ, էջ 508–513:

² Գ. Ավետիքեան, Բացատրություն, էջ 592:

³ Տե՛ս Ղ. Ալիշան, Յուշիկք, հտ. Բ, էջ 194:

⁴ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բարոարան, հտ. Բ, Երևան, 1944, էջ 539:

⁵ Ղ. Ալիշան, Յուշիկք, հտ. Բ, էջ 196:

⁶ Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. 1, էջ 868:

⁷ Գ. Հակոբյան, Նշված աշխատ., էջ 171:

Որոշ վերապահությամբ, մենք ընդունում ենք, որ խնդրո առարկա երգի հեղինակը 8-րդ դարում ապրած **Սահակղուխտն** է: Նա մեզ հայտնի միջնադարյան մեր առաջին երաժիշտ-բանաստեղծուհին է: Սահակղուխտի մասին վկայել են պատմիչներ Ստեփանոս Օրբելյանը և Մխիթար Այրիվանեցին: Ինչպես գրում է վերջինս, Սահակղուխտը «ստացեալ վարս կուսականս եւ հրաժարեալ յամենայն սրբասանաց աշխարհիս. ելեալ ի քաղաքէն Դվնայ՝ բնակեցաւ ի խորային ձորին Գառնոյ առ Ագատ գետով... Սա էր զարդարեալ ամենայն առաքինութեամբ եւ իմաստութեամբ. սնուցանէր մանկունս անարատս, եւ ածեալ ի չափ հասակի, կարգէր ի քահանայութիւն. իսկ ինքն ի ներքոյ վարագորի նստելով, ուսուցանէր զաշակերտեալսն: Սա արար տաղս բագումս եւ մեղեդիս եւ կցորդս Ծննդեան եւ Փոխմանն, յորոց մի է **Սրբուհի Մարիամ**»¹: Անշուշտ, Սահակղուխտը չէր կարող հեղինակել տաղեր և մեղեդիներ, որոնք ավելի ուշ շրջանի երկույթներ են: Իսկ «կցորդս Ծննդեան եւ Փոխմանն» նշանակում է Սուրբ Ծնունդին և Աստվածածնի վերափոխմանը նվիրված օրհներգեր: Ըստ այդմ, Սահակղուխտի «Սրբուհի Մարիամ»ը օրհներգ է, որը ժամանակին ընդգրկվելով Ծարակնոցում՝ հետագայում պարականոն է դարձել: Սահակղուխտն այդ սկսվածքով երկու երգ է հորինել: Դրանցից մեկը՝ «Սրբուհի Մարիամ», անապական Տաճա՛ր» սկզբնատողով, Սուրբ Հակոբյանց վանքի 15-րդ դարի վերջին գրչագրված մի Ծարակնոցից հրապարակել է Նորայր Եպիսկ. Պողարյանը (Ծովական)²: Այս երգի տների սկզբնատառերով հոդվում է **Սահակղուխտ** անունը: «Սրբուհի Մարիամ» սկսվածքով մյուս երգը պահպանվել է թերի: Երգի առաջին և վեցերորդ տները ընդգրկված են ժամագրքում, Խաղաղական ժամերգության մեջ³: Այս երգն էլ նախորդի նման հոդում է հեղինակի անունը: Սակայն այդ երկու երգերը միանգամայն տարբեր ստեղծագործություններ են և ոչ

¹ Գ. Յովսէփեան, Մխիթար Այրիվանեցի, Երուսաղէմ, 1931, էջ 18-19: Տե՛ս նաև Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն անհանգին Սիսական, Թիֆլիս, 1911, էջ 139:

² Տե՛ս «Հասկ», ամսաթերթ, Անթիլիաս, 1951, դեկտեմբեր, էջ 366:

³ «Ժամագիրք», էջ 847:

թե նույն երգի տարբերակներ: Ընդ որում, այս երգերը Սուրբ Ծճնդյան (Աստվածահայտնության) կարգի համար գրված Մեծացուցե՛ներ են:

Ըստ Մխիթար Այրիվանեցու, Սահակդուխտը հորինել է բազում երգեր՝ համալրելով Ծճնդյան և Վերափոխման կարգերը: Եթե ընդունենք, որ Վահան Գողթնացուն ձոնված երգը հեղինակել է Սահակդուխտը, ապա, ուրեմն, նրա անվամբ առայժմ հայտնի են մեկ կանոնական Մանկունք և երկու պարականոն (ամբողջական և թերի) Մեծացուցե՛ներ:

Նախ անդրադառնանք Վահան Գողթնացուն նվիրված «Զարմանալի է ինձ» Մանկունքին՝ փորձելով տուն առ տուն «բացել» այս ինքնատիպ ստեղծագործությունը:

Ինչպես հայտնի է Վահան Գողթնացու վկայաբանությունից, նրան մանուկ հասակում, այլ հայ իշխանագունների հետ, արաբները գերի են տանում և մահմեդական դարձնում: Հասունացալուց հետո նա արաբ ամիրապետի համաձայնությամբ ժամանակավորապես վերադառնում է հայրենի Գողթն: Այստեղ ազգային ինքնագիտակցության գալով՝ Վահանը որոշում է այլևս չլքել հայրենիքը: Մանկության հասակում իր ակամս ուրացության համար նա սկսում է դառնագին ողբալ և «աւագան զարտասունն առնէր»¹: Վահանի այդ ապաշխարական ողբերը զարմացրել-հիացրել են նրան զովերգող բանաստեղծուհուն: Վերջինս իր սիրելիի ողբի ձայներն առավել սրտառու է համարել, «քան զերգս երաժշտականաց»: Ըստ այսմ, առաջին տան մեջ ներկայացվում է դարձի եկած հերոսը: Եվ այդ իրողությունը ուրախարար է եղել օրհներգուհու համար և ոգեշնչել է նրան, շարժել նրա հոգու մասնիկները («զհոգետր մասունս»), մղել է հորինելու ոչ թե զղջական երգ,

*այլ հոգետրս եւ ուրախարարս,
յորդորականս եւ ներբողեանքս...*

Հեղինակն ինքը, փաստորեն, մշել է իր օրհներգի ենթատեսակը՝ **հոգետր ներբողական երգ**: Հաջորդ՝ երրորդ տան մեջ ասված է.

¹ «Սոփեքը Հայկականք», ԺԳ, էջ 23:

*Զարհուրեցուցանէ քո ճրգնութիւնդ
ըզմարմնոյս բընութիւնըս,
իսկ դու առանել գըտար,
ո՛վ երանելի տէր Վահան, սիրո՛ղ Քրիստոսի:*

Հրածարվելով հարստությունից, իշխանությունից ու մերձավորներից, Վահան Գողթնացին, երկարատև թափառումներից հետո, խստամբերոյթյամբ ճգնում է մենաստաններում: Բայց չբավարարվելով դրանով, անում է ավելին («առանել գըտար»)՝ ներկայանում է արաբ ամիրապետին, որպեսզի թույլ տրվի իրեն բացորոշ դավանելու քրիստոնեությունը: Նրան համոզում են, սպառնում, տանջանքների ենթարկում, բայց նա անհողողող է մնում և ինքնակամ ընդունում մահը հանուն հայրենյաց հավատքի: Այդ է, որ ցնցում-զարհուրեցնում է երգի հեղինակի կանացի սիրտը...

Ուշագրավ է չորրորդ տունը: Այստեղ թերևս նկատի ունենալով Գողթան վիպերգուներին կամ անտիկ հեղինակներին, Սահակղուխտը նրանց հյուսած պատմությունները հեթանոս քաջերի սխրանքների մասին սնտոի և խաբեական է համարել, մինչդեռ իր սիրելի Վահանի գործերը կոչել է «աստուածարեալ եւ ոգեշահ», քանզի, ինչպես ասված է վերջին տան մեջ, Վահանը, իբրև քաջ նահատակ, պատրաստվել է պատերազմի և արիաբար կնքել իր մահկանացուն՝ «դասաւորեալ ընդ անմարմնականսն»¹: Այսինքն՝ այստեղ հեթանոս քաջերի սնտոի սխրանքը հակադրված է քրիստոնյա նահատակի «իմացեալ մահին»:

Սահակղուխտի այս հնգատուն երգի յուրաքանչյուր տունն ավարտվում է «Ո՛վ երանելի տէր Վահան» կրկնակով, որտեղ ամեն անգամ փոխվում են հերոսին տրված մակդիրները. «ընտրեալ յԱստուծոյ», «ծառայ Քրիստոսի», «սիրող Քրիստոսի», «ընտրեալ յազատաց», «Գողթնեացն իշխեցող»:

Ինչպես նկատել է Ղ. Ալիշանը, այս օրհներգը «սխրալի եւ պարծելի կ'ընէ թէ՛ զերգեալն եւ թէ՛ զերգիչն»¹: Իսկ ըստ Գ. Ավետիքյանի, այս երգի մեջ «առանելապես փայլէ ո՛չ միայն վա-

¹ Ղ. Ալիշան, Յուշիկք, հտ. Բ, էջ 199:

յելուչ երաժշտութիւն, այլեւ զօրութիւն բանաստեղծական ոճույ՛¹: ԽՆդրո առարկա երգի երաժշտական քննութիւնը դարձյալ հմտորեն կատարել է Ն. Թահմիզյանը՝ նկատելով նաև, որ այն «ուշագրաւ է ոչ միայն բովանդակութեան ոգով, աշխարհիկ, և այն էլ հազվագոյուտ զգացումներով տոգորված կին հեղինակով... այլև շարադրանքի ազատ ձևով և հատկապէս մի քանի այնպիսի մանրամասներով, որոնց շնորհիվ հոգևոր կանոնացված երգում գրեթէ աննախադէպորեն ընդգծվում է, արժեք ու կշիռ է ստանում բանաստեղծուհու եւ-ը: Այս ամենի շնորհիվ, շարականս իրոք ակնհայտորեն տարբերվում է վաղ միջնադարի հայկական հոգևոր ինքնուրույն մյուս երգերից՝ ներկայացնելով միաժամանակ հեթանոս Գողթան երգ-երաժշտութեան արձագանքներից մեկը եկեղեցական արվեստում»²:

Այժմ անցնենք ամբողջական բնագրով մեզ հասած «Սրբուհի Մարիամ» երգին: Հայ մարիամերգութիւնը սկզբնավորել է Քերթոզահայր Մովսէս Խորենացին: Սահակդոլխտն, անշուշտ, չէր կարող չկրել իր մեծ նախորդի օրհներգերի ազդեցութիւնը: Դա կարող ենք ցույց տալ Սահակդոլխտի երգից և Խորենացու օրհներգերից քաղված որոշ տողերի ու պատկերների զուգադրումով: Ինչպէս. «Սրբուհի Մարիա՛մ, անապական Տաճա՛ր» – «Անարատ Տաճա՛ր Տնօրէնութեան»: «Ահեղ Բանին Բնակարան» – «Բնակարան անբաւ Բանին»: «Զհուրն Աստուածութեան յորովայնի Քում ընկալար» – «ԸզՀուրն Աստուած յորովայնի Քում կրեցեր»: «Համապայծառ Ծաղիկ» – «Գերահրաշ Ծաղիկ»: «Դուռն երկնից» – «Երկնային դուռն» և այլն³:

Այս ամենով հանդերձ, Սահակդոլխտի՝ Մարիամ Աստվածածնին ձոնված թե՛ այս և թե՛ մյուս՝ թերի երգը, ինքնօրինակ են, ուստիև գրավիչ ու արժեքավոր: Ահա թե ինչպէս է բանաստեղծուհին գովերգում Սրբուհուն.

*Անդաստա՛ն հոգեւոր եւ համապայծառ Ծաղի՛կ,
որ ի հոգեհոս անձրեւէ՛ն հովանատրեայ՛*

¹ Գ. Ալեւտեքեան, Բացատրութիւն, էջ 591–592:

² Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին, էջ 194:

³ Գ. Հակոբյանը կատարել է որոշ նման զուգադրումներ առհասարակ Մեծացուցէների հետ (տե՛ս Գ. Հակոբյան, Նշված աշխատ., էջ 165–166):

*ի Քեզ պտղաբերեցեր ի Հօրէ Յայտնեալ մարդկան.
Օրհնեալ ես Դու ի կանայս,
Բերկրեալ Տիրամայր եւ Կո՛յս:*

Վերջին երկտողը, որով ավարտվում են բոլոր տները, ավելի ուժեղացնում է երգի հուզական շեշտը: Բայց բոլոր տները չեն, որ նվիրված են Աստվածամորը. մի քանիսը վերաբերում են կուսածին Քրիստոսին, ինչպես.

*Խորհո՛ւրդ կենաց եւ փրկութեան,
վերաթեւող եղեր յաշխարհի,
երգապալէս բարձրացուցեր ըզհողեղէնքս ընդ հոգեղէնսրն՝
ի բնակութիւնս հրեշտակաց:*

Երգն, ուրեմն, Սրբազան Մոր և Որդու մի համատեղ պանծացում է: Սահակոյիստի՝ թե՛ վահան Գողթնացուն և թե՛ Աստվածամորը ձոնած երգերը, անատարկելիորեն, 8-րդ դարի հայ բանաստեղծության լավագույն նմուշներն են:

Սահակոյիստը քույրն էր Աշտնակոյի մատենագիր, աստվածաբան, քերական, թարգմանիչ **Ստեփանոս Սյունեցու** (գրիված 735 թ.): Մատենագրական որոշ աղբյուրներ նույնացնելով 5-րդ դարում ապրած Ստեփանոս Սյունեցուն 8-րդ դարի Արա անվանակցի հետ՝ առաջինի գործերը վերագրել են երկրորդին: Հիմնվելով հատկապես Ն. Թահմիզյանի կատարած հմուտ քննության վրա¹, համոզվել ենք, որ ոսկեդարյան Ստեփանոս Սյունեցին է հեղինակել Հարության Ավագ Օրհնութիւնները (ինչպես նաև Մարտիրոսաց կարգը): Մակաբերելով սրանից՝ մենք հանգել ենք այն եզրակացության (եթե ոչ՝ համոզման), որ նույն ոսկեդարյան Ստեփանոս Սյունեցին է կանոնակարգել (ըստ ձայնեղանակների և երգատեսակների) Կցորդարանը, ստեղծելով Ծարակնոցի առաջին խմբագրությունը՝ Հովհան Մանդակունու հանձնարարությամբ...

Նշենք նաև, որ շարակնոցային ցանկերում Ստեփանոս Սյունեցի Երկրորդին է վերագրվել նաև Խաչվերացի «Սրբութիւն սրբոց» սկսվածքով օրհներգը: Վերջին՝ առավել ճշգրտված ցան-

¹ Տե՛ս «Էջմիածին», 1973, Բ, էջ 29-43:

կում (Անանուն խմբագրություն) ասված է. «Ստեփաննոս Սիւնեցի Երկրորդն՝ ըզՍրբութիւն սրբոց՝ Խաչին, զոր ոմանք Ստեփաննոսի Մոկաց եպիսկոպոսի տան, որ Ապարանցի եւս կոչի»¹:

Ինչպես գրել է Գ. Ավետիքյանը, «...գերապանձ շարականն **Սրբութիւն սրբոց**, յորում սկզբնագիրք տանցն կապեն զանունս **Ստեփաննոս**. եւ է նա Ստեփաննոս Ապարանցի՝ եպիսկոպոս Մոկաց յիններորդ դարում. առ որ յղեաց Նարեկացին զՊատմութիւն Ապարանցի խաչին»²:

Ամփոփելով բոլոր առկա տվյալները, Ն. Թահմիզյանն իրավացիորեն եզրահանգել է, որ սխալ են Ավագ Օրհնութիւնները, Մարտիրոսաց կարգը և «Սրբութիւն սրբոց» օրհներգը Ստեփանոս Սյունեցի Երկրորդին վերագրելու տեղեկությունները³: Ըստ Թահմիզյանի, վերջինիս, որպէս «երաժիշտ-տեսաբանի, գրչին պատկանող առ այսօր հայտնի գործերն են. Օրբելյանի հիշատակած՝ Հինանց և Աղոռուացի ստողոգիական սաղմոսները (դրանց եղանակները), որոնց խազավորումները պահպանվել են մանրամասն գրքերում, և Խաչի երկու տաղ, որոնք նրա անունով հանդիպում են կիլիկյան ընտիր Գանձարաններից մեկում»⁴:

Այսպիսով, ուրեմն, **Ստեփանոս Սյունեցի Երկրորդը օրհներգեր չի հեղինակել**, կամ եթե հեղինակել է, դրանք մեզ հայտնի չեն⁵:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ ասենք, որ 7-8-րդ դարերում

¹ «Շարական», էջ Բ: **Հ. Անասյան**, Հայկական մատենագիտություն, հտ. Ա, էջ LXVIII:

² **Գ. Աւետիքեան**, Բացատրութիւն, էջ 515: Ավետիքյանը հիմք է ունեցել Առաքել Սյունեցու և Ստեփանոս Ջիք Ջուղայեցու վկայությունները (տե՛ս **Հ. Անասյան**, Հայկական մատենագիտություն, հտ. Ա, էջ LXX, LXXII):

³ Տե՛ս «Էջմիածին», 1973, Բ, էջ 39:

⁴ Նույն տեղում, էջ 39, 43:

⁵ Ն. Թահմիզյանը տուրք տալով ավանդութիւն, ենթադրել է, թե Ստեփանոս Սյունեցի Երկրորդը հավանաբար հորինել է Մարտիրոսաց և Ննչեցեղոց կարգերի առանձին շարականներ (տե՛ս **Ն. Թահմիզյան**, Ներսես Շնորհալիւն, էջ 19): Ավանդութիւն տուրք է տվել նաև Պ. Խաչատրյանը՝ Ավագ Օրհնութիւնների երկու մտուշ հրապարակելով Երկրորդ Ստեփանոս Սյունեցու անունով (տե՛ս «Գանձարան հայ հին բանաստեղծության», Երևան, 2000, էջ 68): Ավելացնենք նաև, որ Ստեփանոս Սյունեցին չէր կարող ստեղծել տաղեր, քանի որ տաղն առավել ուշ շրջանում հանդես եկած ժանր է:

հայ օրհներգությունը բուն վերելք է ապրել: Այդ ընթացքում Կցուրդարան Ծարակնոցը համալրվել է 18 նոր կարգերով. Հոփսիսիմյանց, Աշխարհամատրան, Համբարձման, Օղակաթի, Սուրբ Խաչի ութօրեից, Վարագա Խաչի, Խաչի գյուտի և չորս Ավագ տոների: 8-րդ դարում ստեղծվել է նաև Վահան Գողթնացուն Գվիրված երգը, որը հետագայում ընդգրկվել է Ծարակնոցի վկայաբանական Մանկունքների շարքում: 7–8-րդ դարերում նաև նորանոր օրհներգերով համալրվել են նախկին կարգերը, իսկ որոշ երգեր դարձել են պարականոն:

Ինչպես 6-րդ դարը, 9-րդ դարն էլ, ընդհանուր առմամբ, հայ մշակույթի ժամանակավոր տեղատվության շրջան է եղել: Այս շրջանում էլ հիմնականում ստեղծվել են մեկնողական-դավանաբանական երկեր. թղթեր, քարոզներ, ճառեր... Այս ժամանակ է վերջնականապես կազմավորվել Մաշտոց ծիսական ժողովածուն (Մաշտոց Եղիվարդեցու ձեռքով): Այս ժամանակ է նաև ստեղծվել Ծապուհ Բագրատունու Պատմությունը, որը, ցավոք, չի պահպանվել...

9-րդ դարում է ապրել մատենագիր **Համամ Արևելցին**: Նա գործել է Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսի օրոք (877–897): Եղել է Աղվանից իշխան (Բագրատունյաց տոհմից): Հրաժարվելով իշխանությունից՝ Գվիրվել է հոգևոր-մշակութային գործունեության: Հայտնի են նրա աստվածաբանական և մեկնողական երկերը, ինչպես նաև «Կարգաւորութիւն Սաղմոսաց» երաժշտագիտական աշխատությունը:

Համամ Արևելցին արաբ ոստիկան Բուղայի հարկադրանքով, մեզ անհայտ պատճառով, սպանել է իր եղբորը և այդ կապակցությամբ գրել է մի զղջական երգ, որի տների սկզբնատառերով հոդվում է **Համամ** անունը: Այդ երգը ժամանակին ընդգրկվել է Ծարակնոցի մեջ, ապա դուրս մնալով՝ դարձել պարականոն¹: Սա, փաստորեն, 9-րդ դարից մեզ հասած միակ օրհն-

¹ Տե՛ս Կ. Կոստանեանց, Համամ Արևելցի, «Արարատ», 1896, էջ 169–176: Ս. Ամատունի, Նշված աշխատ., էջ 163–164:

երգն է: Այստեղ հեղինակը դիմելով Տիրոջը՝ խոստովանել է իր մեղքը՝ ասելով.

*Արք անօրէնք կոչեցին զիս հաղորդիլ արեան մահու,
զնացի զճանապարհս ձախակողմեանըն,
կատարեցի զչար խորհուրդ նոցա.
աղաչեմ ըզՔեզ՝ ներեա՛ յանցանաց իմոց,
որ միայնդ ես Ողորմած:*

Վերջին տողը կրկնվում է բոլոր հինգ տներում և զղջական-ապաշխարական հնչերանգ հաղորդում ամբողջ երգին, որ հորինված է իբրև Ողորմեա:

Համամ Արևելցու այս երգը նորություն է հայ բանաստեղծության մեջ, քանի որ առաջին անգամ արծարծում է **անձնական թեմատիկան**: Հենց այս պատճառով էլ այն միառժամանակ ընդգրկվելով կանոնական Ծարակնոցի մեջ, շատ չանցած դարձել է պարականոն: Պատճառը ավելի քան պարզ է: Օրհներգերում զղջական-ապաշխարական խոսքը ասվել է պաշտող համայնքի կամ այն մարմնավորող **ընդհանրական ես-ի** կողմից՝ առհասարակ մարդկային մեղքերի համար: Իսկ խնդրո առարկա երգում ապաշխարանքը կոնկրետացված-անձնավորված է, քանի որ արված է **կոնկրետ անձի որոշակի մեղքի համար**: Սա շեղում էր օրհներգական ավանդույթից, բայց նորույթ ու նորամուծություն էր միջնադարի հայ քերթության մեջ: Ըստ այսմ, Համամ Արևելցին իր այս երգով հանդես է գալիս իբրև նորարար հայ օրհներգության և առհասարակ հայ քնարերգության մեջ...

10-րդ դարում թեև հայ մշակույթը նախորդ հարյուրամյակի տեղատվությունից հետո ապրել է բուռն մակընթացություն, սակայն այս ժամանակաշրջանում էլ մեր օրհներգությունը առաջընթաց չի ունեցել:

Դարի երկրորդ կեսին Մոկաց աշխարհի Ապարանից Ս. Խաչ վանքում է գործել **Ստեփանոս Ապարանեցին (Մոկացի)**: Այդ վանքը եղել է Մոկքի առաջնորդարանը, և Ստեփանոս

Եպիսկոպոսը վարել է առաջնորդի պաշտոնը: Նա է շուրջ 970-ին կառուցել վանքի Ս. Ստեփանոս Նախավկա, իսկ 983-ին՝ Ս. Աստվածածին եկեղեցիները և մի քանի մատուռներ: Ստեփանոսի առաջնորդության օրոք բյուզանդական Վասիլ II կայսրը Ս. Խաչ վանքին է նվիրել Քրիստոսի խաչափայտի և այլ սուրբ մասունքներ: Դրանք տեղափոխվել են նորակառույց Ս. Աստվածածին եկեղեցի, որի օծմանը, ի թիվս մի շարք աշխարհիկ և հոգևոր տերերի, ներկա է եղել նաև Գրիգոր Նարեկացին: Ստեփանոս Ապարանեցու խնդրանքով Նարեկացին գրել է Ապարանից խաչի պատմությունը և ներբողյալը: Այստեղ մեծ բանաստեղծն այսպես է բնորոշել Ստեփանոս Եպիսկոպոսին. «Այն զի հաւաստի ըստ կոչմանն իւրոյ եղև պսակ պարծանաց պանծալի վայրիցն այնոցիկ»¹: Իսկ հիշատակարանում ասել է. «Եւ արձանացուցի սմին անջինջ յիշատակ զանուն տենչալի ձերումդ կոչման, տէ՛ր Ստեփանոս՝ լերինդ Մոկաց հօգօր դիտապե՛տ»²:

Սուրբ Խաչի մասունքները Ապարանից վանքում հաստատվելու առթիվ Ստեփանոս Եպիսկոպոսը հորինել է օրհներգերի մի շարք, որը բովանդակում է Ստեփանոս անունը կապակցող «Սրբութիւն սրբոց» եռամաս Օրհնութիւնը և «Ճառագայթ փառաց» Հարցնը իր կազմով (Ողորմեա, Տէր լերկնից): Օրհնութիւնը ընդգրկված է կանոնական Ծարակնոցի Խաչվերացի Երեքշաբթի օրվա կարգում (որոշ ձեռագիր Ծարակնոցներում ութերորդ օրվա կարգում է):

Հարցնը (իր կազմով), Օրհնութեան հետ, միառժամանակ ընդգրկվելով Ծարակնոցում, վերջինիս հետագա խմբագրությունից դուրս է մնացել: Ըստ Ս. Ամատունու, «Թերևս Հարցն եւս իր սարօք յօրինել է Ստեփանոս Ապարանեցին»³:

¹ Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 381:

² Նույն տեղում, էջ 422:

³ Ս. Ամատունի, Նշված աշխատ., էջ 129: «Քննությունը ցույց է տալիս, որ այդ օրհներգերը նույն գրչի արգասիք են: Այս կապակցությունը տե՛ս նաև երաժշտագետ Աննա Արևշատյանի «Անիի երաժշտական մշակոյթը եւ նրա հետ կապուած շարականագիրները» հոդվածը («Բազմավեպ», 1995, էջ 210-211):

Ինչպես տեսանք, Սուրբ Խաչի առաջին օրհներգու-գովերգուն է Սահակ Ջորոփորեցին: Նրա երգերի ազդեցությունն, անշուշտ, կրել է Ստեփանոս Ապարանեցին, որին, սակայն, հաջողվել է նորովի պանծացնել աստվածային Սուրբ Նշանը: Օրհներգուն այն կոչել է «Սրբութիւն սրբոց Եկեղեցւոյ», «քառակուսի աթոռ Խաչելոյն», «Բարձող Բարձրելոյն», «ի սուր սրով-բէափայլ ծառ կենաց տնկեալ»,

*Բանալի՛ դրախտին, նորոգո՛ղ բնութեանս,
գառազա՛ն կենաց նախնոյն Ադամայ...*

Սուրբ Խաչը երկնահաս իմանալի սանդուղք է, որ տանում է մարդկանց մինչև հավերժական կյանքի շեմքը: Այն իր «սիւնատեպիլ փայլմամբ» առաջնորդ է եղել «ժողովրդեանն Իսրայէլի»:

Ապարանեցու խաչերգությունն էլ լույսով է ողողված, քանզի լուսածին Սուրբ Նշանը նա պատկերել ու պատկերացրել է իբրև «սեղան լուսոյ», «պայծառ արեգակ», «լոյս բերկրեալ».

*Ընտագայթ՝ փառաց աստուածային նշանի Խաչի Քո, Տէ՛ր,
յերկնից փայլատակեալ՝
արփիափայլ, հրրածել ցուցաւ բազմութեան ժողովոյն...*

*Ծագումըն փայլակնացայտ ի Գողգոթա ցոլացեալ՝
երեւի Նըշան Քո, Տէ՛ր...*

*Որ անճատելի աստուածային փառօք
պայծառացոյց հրրակերպ փայլմամբ ըզնըշան Խաչին,
հրաշագործեաց ի մեզ գօրութիւն ճառագայթիցըն,
արփիահրաշ լուսով զարդարեաց զԿաթողիկէ Եկեղեցի...*

Ապարանեցին լուսեղեն Խաչը համարել է Քրիստոսի երկրորդ գալստյան ազդարար-կարապետը: Եվ ահա «ի վերջնում ատուր» արեգակը նվազում է,

*լուծանէ ժողովեալ զիր զկարծեցեալ ճանանչըն,
եւ ահեղահրաշ ճառագայթիք ցոլանայ յերկնից գերահրաշ
Նըշանըն...*

Ողորմեա երգում դիմելով Սուրբ Խաչին՝ օրհներգուն ասել է.

*Որ վայելուչ փառօք կազմեցար ի ձեռ
նսկեզոյն մանուշակի,
առաւօտոյ ա՛ստղ Արուսեկի...*

Ինչպէս Հովհաննէս Մկրտիչը ազդարար-կարապետը լինելով Քրիստոսի գալստյան՝ մեր օրհներգության մեջ համարվել է լուսաստղ-Արուսյակ, այնպէս էլ Սուրբ Խաչն այստեղ «առաւօտոյ աստղ Արուսեկի» է կոչվել, քանի որ Տիրոջ երկրորդ գալստյան ազդարար-կարապետն է եղել: Ուշագրաւ է, որ բերված տան մեջ Սուրբ Խաչը համեմատվել է ոսկեզույն մանուշակի հետ: Սա, կարծում ենք, Ապարանեցու հանճարեղ ժամանակակցի՝ Գրիգոր Նարեկացու ազդեցության արդյունք է: Ասենք, որ իր վաղ շրջանում գրած Յարութեան» տաղում Նարեկացին խորհրդանշական սալլիկի վրա պատկերել է նաև «մին մանուշակ խրձաղիզեայ՝ մեկնաբանելով, որ այդ մանուշակը խորհրդանշում է «միատրեալ Երրորդութիւնն»: Նարեկացու տաղերում և մեղեդիներում առհասարակ հաճախադեպ է ծաղկի (գոհար վարդ, շուշան հովտաց, ծաղիկ դաշտաց և այլն) խորհրդանշը: Ստեփանոս Ապարանեցին էլ Քրիստոսին համարել է «Գեղեցիկ Ծաղիկ՝ յարմատուն Յեսսեայ», որը խաչին բարձրանալով՝ «արեամբ ծաղկեցաւ եւ նորաբողբոջ լըցոյց զարարածս»: Այստեղ հիշենք, որ Ծարակնոցում Ծանդյան հինգերորդ օրվա կարգն ավարտվում է մի Ծաշու-Մեծացուցէով, որը զգալիորեն շեղվում է Խորենացու լեզվից և ոճից, ուստիև՝ հետսամուտ է: Այդ երգի առաջին տողն է՝ «Անթառամ Ծաղիկ, անդատապարտ Ծառաիհ՝ վերաբուսեալ յարմատուն Յեսսեայ»: Սա համահունչ է Ապարանեցու երգի «Գեղեցիկ Ծաղիկ՝ յարմատուն Յեսսեայ» տողին, և մեզ մղում է ենթադրելու, որ «Անթառամ Ծաղիկ» Մեծացուցէն թերևս Ապարանեցին (կամ զուցե Նարեկացին) է հեղինակել...

Հարության Հարցների ութերորդ շարքում ընդգրկված է նաև Գրիգոր Նարեկացու «Փա՛ռք Քրիստոսի ամենազօր Յարութեան» Տէր յերկնիցը: Այս տողով է ավարտվում (որոշ աղբյուր-

ներում՝ նաև սկսվում) Նարեկացու նշանավոր «Յարութեանն» տաղը («Սայլն այն իջանէր»): Ինչպես նկատել է Մ. Աբեղյանը. «Յարութեան» շարականն եղել է Նարեկացու «Յարութեան» տաղի շարունակությունն, իբրև Սիոնի որդիների երգ, որ պետք է լիներ տաղի վերջում և պակասում է»¹: Տաղի մանրամասն քննությունը կատարած Գ. Աբգարյանը եզրահանգել է, որ օրհներգը (շարականը) ոչ թե տաղի մի մասն է, այլ նրա օգտագործմամբ հորինված առանձին երգ²: Անդրադասնալով այս խնդրին, Ն. Թահմիզյանը գտել է, որ Հարության օրհներգը հանդիսանում է Նարեկացու «դեռևս նորահաս գրչին պատկանող միակ շարականը», որը «հորինվել է նույն տոնին նվիրված տաղից շատ առաջ»³: Ն. Թահմիզյանն ավելացրել է նաև, որ «կան ձեռագրեր էլ, որոնցում «Սայլն այն իջանէր» տաղի՝ սվյալ գրչին հայտնի վերջին տողից հետո բերվում է Հարության ԴԿ շարականի առաջին տունը (ամբողջապես): Այնպես որ, քննարկվող տաղի ու շարականի ձևական հարաբերության (և կամ՝ մեկը մյուսի մաս կազմելու) հարցը դեռևս մնում է քննելի»⁴:

Այս առաջադրված հարցը առանձին ուսումնասիրությամբ քննել է Գ. Փիտեճյանը: Նա եկել է այն համոզման, որ Հարության օրհներգը Նարեկացու գրչին պատկանող գործ է և «Սայլն այն իջանէր» տաղի խմբերգն է, «որ մեզի հասած է անկախ տաղէն՝ իբրև ԴԿ Յարութեան Տէր յերկնից շարական»⁵:

Մեր կարծիքով, խնդրո առարկա երգը Հարության տաղի փոխն է, որը հետագայում տաղից անջատվելով՝ ընդգրկվել է Ծարակնոցում: Միջնադարյան հայ քերթության հանճարը «չի տեղավորվել» կես հազարամյակի ընթացքում կանոնավորված օրհներգության կաղապարների մեջ և արտահայտվել է բանաստեղծական նոր, առավել անկաշկանդ ժանրերի մեջ: Նկատի ունենք գանձը, իր ընթերակա տաղ և փոխ ենթատեսակներով

¹ Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Գ, էջ 626:

² Տե՛ս Գ. Աբգարյան, Վերծանություն Գրիգոր Նարեկացու «Հարության տաղի», «Էջմիածին», 1974, թիվ 1, էջ 42-48, թիվ 2, էջ 39-48:

³ Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին, էջ 82, 88:

⁴ Նույն տեղում, էջ 87:

⁵ Գ. Փիտեճեան, Գրիգոր Նարեկացի շարականագի՞ր, Երևան, 2000, էջ 99:

և անհատական բանաստեղծական աղոթքը, որպես երաժշտությունից տարանջատված բան (բանաստեղծություն), որի առաջին և բարձրագույն դրսևորումը եղավ նրա անմահ «Մատենանոյքերգութեան» երկը...

Նարեկացու ստեղծագործության վրա որոշակի ազդեցություն են ունեցել մի կողմից՝ լայնորեն տարածվող ժողովրդական ու ժողովրդագուսանական երգը, մյուս կողմից՝ արդեն հարյուրամյակների ընթացքում ծավալված օրհներգությունը: Հակադարձ ուժով հետագա օրհներգության վրա խորապես ներգործել է Նարեկացու ստեղծագործությունը, հատկապես՝ տաղերգությունը: Նարեկացուց սկիզբ առնող «տաղերի արվեստին հատուկ երգաստեղծության նոր ոճը շուտով արձագանք է գտնում շարականների վերսկսված ստեղծագործության բնագավառում ևս»¹:

Այնպես որ, **Գրիգոր Նարեկացին հատկապես իր տաղերով, մասամբ նաև գանձերով ու Ողբերգության մատյանով մեծապես նպաստել է հայ օրհներգության զարգացմանը...**

Այստեղ անհրաժեշտ ենք համարում ասել նաև, որ թերևս արդեն 10-րդ դարում օրհներգը՝ տարանջատելու համար տաղերից, կոչել են նաև շարական: Ըստ այդմ, օրհներգություն և օրհներգու եզրերն այսուհետ մշել ենք նաև, համապատասխանաբար, շարականագրություն և շարականագիր անվանումներով: Նույն այս ժամանակ (գուցեն ավելի վաղ) կարգ եզրին սկսել է փոխարինել կանոն եզրը:

10-11-րդ դարերում, Բագրատունյաց թագավորության օրոք, պետական խնամածության շնորհիվ կառուցված ու վերակառուցված վանքերում ու եկեղեցիներում նոր թափ են առնում հայ դպրությունը, մատենագրությունը և մասնավորապես հոգևոր

¹ Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին, էջ 38: Այս կապակցությամբ տե՛ս Գ. Հակոբյան, Նշված աշխատ. «Գրիգոր Նարեկացին և Հայոց հոգևոր երգը» գլուխը (էջ 172-187):

երգարվեստը: Այս առումով հիշատակելի են հատկապես Նարեկավանքի, Սանահինի, Հաղպատի և Անիի դպրոցները: Այստեղ, նախորդ շրջանի օրհներգության և Գրիգոր Նարեկացու ստեղծագործության հարուստ փորձի հիման վրա, նորովի մշակվում է մեր մասնագիտացված երգարվեստը: Դրա շնորհիվ 11-րդ դարում սկսվում է օրհներգության կամ շարականագրության վերելքի հաջորդ փուլը: Այդ նոր վերելքը նշանավորվում է հատկապես **Պետրոս Ա Գետադարձ** կաթողիկոսի ստեղծագործությամբ:

Գետադարձը, որոշ ընդմիջումով, գահակալել է 1019–1058 թվականներին: Հայաստանն այդ ժամանակաշրջանում ապրել է ներքին երկպառակությունների և հայ-բյուզանդական քաղաքական ու դավանաբանական հարաբերությունների ծայրահեղ սրման պայմաններում, որոնք հանգեցրել են Բագրատունյաց թագավորության անկմանը: Դրան, ցավոք, որոշակիորեն նպաստել է նաև Պետրոս կաթողիկոսը, որը հույս ունենալով Բյուզանդիայի սատարմամբ պահպանել գոնե Հայ Եկեղեցու իշխանությունը՝ մայրաքաղաք Անիի բանալիները հանձնել է բյուզանդական կայսրին: Սակայն կայսրությունը, որ հետամուտ էր վերացնելու նաև Եկեղեցու անկախությունը, հալածել է Պետրոս կաթողիկոսին, որը 1047-ից մինչև մահն ապրել է աստանդականության ու քստրի մեջ:

Գրիգոր Մագիստրոսի մի շարք գամակներից տեսնում ենք, որ Պետրոս Գետադարձը եղել է ժամանակի ամենազարգացած մտավորականներից մեկը: Կյանքի վերջում հակաբյուզանդական տրամադրություններով համակված կաթողիկոսը, որը մշտապես Հայ Եկեղեցու ինքնության ջատագով է եղել, հանձնարարել է նշանավոր մատենագիր Անանիա Սանահնեցուն գրել «Բան հակաճառութեան ընդդէմ երկաքնակաց» դավանաբանական երկը: Նրա պատվերով Սանահնեցին գրել է նաև Պողոս առաքյալի թղթերի մեկնությունը, իսկ ժամանակի մեկ այլ նշանավոր գիտնական-վարդապետ՝ Հովհաննես Կոզեռնը, գրել է Բագրատունյաց տան պատմությունը...

Պետրոս Գետադարձն ինքը, ինչպես հայտնի է, զղջալով իր գործած պատմական մեծ սխալի համար, իր «հոգեկան կիզիչ խոռվքն ու հայրենասիրական վառ զգացումները զեղեց մի ամ-

բողջ շարք շարականներում, որոնց հորինմանը նվիրվել էր հավանաբար տարագրության տարիներին»¹: Այսպես թե այնպես, Պետրոս Գետադարձի օրհներգությանը սկիզբ է առնում **Անիի շարականագիրների դպրոցը**:

Ծարակնոցային ցանկերը Պետրոս Գետադարձին են վերագրել հետևյալը. «ՋՄարտիրոսացն եւ զԱռաւաւտ երգերն՝ տէր Պետրոս կաթողիկոս ասաց»: «ՂՀանգստեանն եւ զՄարտիրոսացն՝ Պետրոս Գետադարձն, եւ զբազումս ի Մանկտեացն»: «Պետրոս Գետադարձն՝ զՀանգստեան շարականսն, զՄարտիրոսացն և զբազումս ի Մանկտեաց»²:

Բերված երեք վկայություններն էլ Մարտիրոսաց կանոնի հեղինակ են համարում Պետրոս Գետադարձին: Սակայն այդ կանոնի (կարգի) հիմնական հեղինակը Ոսկեդարում ապրած Ստեփանոս Սյունեցին է: Կարծում ենք, որ Պետրոս Գետադարձը, թերևս, միայն որոշ երգեր է հավելել այդ կանոնում: Մարտիրոսաց կանոնը Պետրոս Գետադարձին է վերագրվել թերևս նաև այն պատճառով, որ նա հեղինակել է մի շարք վկայաբանական շարականներ, որոնք կարելի է դիտարկել իբրև այդ կանոնի Մանկունքներ...

Մեզ համար ընդունելի է, որ Պետրոս Գետադարձն է Հանգստյան կամ Ննջեցելոց կանոնի շարականների հիմնական կամ զգալի մասի հեղինակը: Գ. Ավետիքյանն էլ վկայել է. «Ջկարգ Հանգստեան շարականաց ըստ ութ ձայնից՝ ասեն արարեալ Պետրոսի Գետադարձի»³:

Ննջեցելոց կանոնում Պետրոս Գետադարձն ընդգրկել է շատ ավելի վաղ ստեղծված որոշ երգեր: Դրանք, ինչպես ենթադրել ենք, հեղինակել է Սահակ Պարթևը⁴: Այդ երգերը, դարձյալ մեր ենթադրությամբ, գետեղված են եղել նախնական Ժամագր-

¹ Ն. Թամիլզյան, Գրիգոր Նարեկացին, էջ 233: Տե՛ս նաև Կ. Կոստանեանց, Տէր Պետրոս Ա Գետադարձ, Վաղարշապատ, 1897, էջ 42-53:

² «Ծարական», էջ Բ: Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հտ. Ա, էջ LXX-LXVIII:

³ Գ. Ավետիքեան, Բացատրութիւն, էջ 650:

⁴ Տե՛ս Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթև, Օրհներգեր, Երևան, 2010, էջ 312-317, 334-335:

քում: Իր կազմած կանոնում Պետրոս կաթողիկոսը ներառել է նաև որոշ երգեր, որոնք, թերևս նրա հանձնարարությամբ, գրել են նրա ժամանակակիցները (երկուսի անունը հայտնի է՝ Սարգիս վարդապետ Սևանեցի և Հակոբ Սամահեցի): Ննջեցելոց կանոնն, անշուշտ, հետագայում համալրվել է այլ հեղինակների օրհներգերով¹...

Խնդրո առարկա կանոնը բաղկացած է ութ շարքերից՝ ըստ հայկական ձայնեղանակների: Այդ շարքերն ընդգրկում են Հարցներ՝ իրենց կազմով (Ողորմեաներ, Տէր յերկնիցներ): Վեցերորդ և յոթերորդ շարքերում առկա են նաև Մեծացուցեներ, որոնք, անկասկած, այլ գրչի արգասիք են: Բոլոր դրվագներում կան բազում Տէր յերկնիցներ, որոնց մեծ մասը ևս պատկանում է այլ հեղինակների: Վերջին շարքն ավարտվում է Ճաշու երգերով, որոնցից միայն մեկի հեղինակն է, թերևս, Պետրոս Գետադարձը²:

Ըստ շարակնոցային ցանկերից վերը բերված տվյալների, Պետրոս Գետադարձն է հեղինակել Առավոտերգերը կամ «գբագումն ի Մանկտեաց»: Խոսքը առավոտյան ժամին երգելի շարականների մասին է, որոնք ընդգրկված են Ծարակնոցի սրբախոսական երգերի շարքերում: Այստեղ է ընդգրկված նաև Վահան Գողթնացուն մվիրված երգը (Սահակղոյխտի հեղինակությամբ): Սրբախոսական երգերի «առաւելագոյն մասի» հեղինակը, ըստ Գ. Ավետիքյանի, Պետրոս Գետադարձն է³: Նրան են պատկանում մի շարք Մանկունքներ՝ մվիրված Սրբուհի Սանդուխտին, Դավիթ Դվնեցուն, Կիրակոսին և Հուղիտային,

¹ Ըստ Մ. Օրմանյանի, Պետրոս Գետադարձը Ննջեցելոց կանոնի «շարականներուն հաւաքողը, ընտրողը եւ կարգադրողը եղած է, իրմէ ալ կտորներ աւելցնելով... այս գործը յարմարագոյն է իր կաթողիկոսութեան առաջին տարիներու մէջ կատարուած ընդունիլ» (Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. 1, էջ 1253):

² Պահպանվել են նաև Հանգստյան բազմաթիվ պարականոն շարականներ, որոնց հեղինակները հայտնի չեն, բացի մեկից, որի անունն ակրոստիքոսով կապվում է Անտոն (տե՛ս Ս. Ամատունի, Նշված աշխատ., էջ 179–188):

³ Տե՛ս Գ. Աւետիքեան, Բացատրութիւն, էջ 576: Տե՛ս նաև Ս. Ամատունի, Նշված աշխատ., էջ 64–65:

Սուքիասանց, Ոսկյանց, Ատոմանց, Վարդանանց, գուցե և այլ վկաների¹: Գետադարձն է հեղինակել մաս Սուրբ Հայրապետաց մկրված Մանկունքը, որը հետագայում Ներսես Ծնորհալին ընդգրկել է իր կազմած համապատասխան կանոնի մեջ:

Հանգստյան կամ «Համօրէն անջեցելոց ի Քրիստոս» կանոնը կազմող շարականների հիմնական մոտիվն է օրհներգուի աղերսը (իբ կամ համայնքի կողմից), որպեսզի Քրիստոսը հիշի և ողորմի մեր անջեցյալների հոգիները և իր երկրորդ գալստյանը արժանացնի նրանց երկնային արքայությանը: Ահա մի մտուշ.

*Քրիստո՛ս Աստուած,
յիշեա՛ ըզնընջեցեալսն ի սուրբ անունըդ Քո:*

*Ըզգինս արեան Քո, Տէ՛ր,
յիշեա՛ եւ հանգո՛ ընդ սուրբըս Քո:*

*Եւ ի միւսանգամ Քո գալըստեանըն
ըզնընջեցեալսն մեր յիշեա՛ եւ հանգո՛ ընդ սուրբըս Քո:*

Բնականաբար, հիմնական թեմա է դառնում մաս Քրիստոսի երկրորդ գալուստը, երբ վերակենդանանում են անջեցյալները, և սկսվում է ահեղ դատաստանը: Այդ օրը շատաչում է հրեշտակապետի փողը, որի ձայնից «շարժին զօրոյթիւնք երկնից», «նորոգին տարեք երկրի», «զարթիցեն մեռեալքն», «զարհուրեալ դողան արարածք»... Եվ ահա սկսվում է ահեղ դատաստանը.

*Ատեանըն դընի, եւ դըպրոյթիւնք հրաշիցըն բանին,
եւ Դատաւորն ահեղ յակնարկելն Իւր յարարածըս՝
հատուցանէ վարձս ըստ գործոց իւրաքանչիւրոցըն...*

¹ Ն. Թահմիզյան, Ներսես Ծնորհալին, էջ 20: Նույն, Գրիգոր Նաբեկացին, էջ 233:

Որքան էլ ահեղ և անաչառ է Քրիստոս-Դատավորը, սակայն նրան բնորոշ են նաև ողորմածությունն ու մարդասիրությունը, ուստիև ննջեցյալների հոգիների փրկության համար աղերսող օրհներգուն դիմում է Աստծուն՝ առավելապես իբրև միակ Բազումողորմի և Մարդասերի: Աստված նաև Լույս է և Հույս, և հեղինակը ավանդական լուսերգության ոգով հայցում է.

*Որ Լուսատու ես տիեզերաց, Քրիստոս՛ս Աստուած,
լուսատրեա՛ եւ ըզմեր ըզննջեցեալսքն լուսով երանաւէտ
զուարթնոցըն,
ողորմա՛ծ Տէր, Փըրկի՛չ եւ Բարերա՛ր:*

Ահեղ դատաստանից հետո արդարներն արժանանում են երկնային արքայությանը: Գեղեցիկ է պատկերված նրանց հոգիների ճախրանքը դեպի Վերին Երուսաղեմ.

*Լուսատր են ճանապարհք արդարոց,
եւ ի բիրատր բանակս հրեշտակաց ամպովք ընթանան:*

*Ի Վերին Երուսաղէմ թըռչին ամպովք՝ ընդ առաջ Տեառն յօղս,
եւ ամենայն ժամ ընդ Տեառըն յինին:*

Օրհներգուն երբեմն անդրադառնում է սեփական անձին՝¹ աղերսելով նաև իր փրկության համար, քանզի ինքն էլ մեղսալից մահկանացու է, որ ստեղծվել է հողից և վերադառնում է հողին.

*Ձեռք Քո արարին եւ ստեղծին զիս ի հողոյ՛
ի յօրհնել ըզՔեզ, Աստուա՛ծ յափտեան:*

*Իսկ պատրանօք բանասրկուին յափանեցայ յանճառ լուսոյն
եւ դարձայ անդրէն ի հող, յորմէ ստեղծայ:*

¹ Ըստ Մ. Աբեղյանի, Պետրոս Գետադարձը «կյանքի վերջում դառն փորձով զգացել է իր աշխարհային մեծության ու փարթամության ոչնչությունը: Հանգստյան շարականները մասամբ համապատասխանում են նրա այդ անձնական վիճակին» (Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Դ, Երևան, 1970, էջ 49):

Մեկ այլ շարականում կարդում ենք.

*Մերձեցայ ես ի դուռըն գերեզմանին,
եւ եհաս ինձ ժամանակ մըտանել ի յարգանդ երկրի,
յորմէ ստեղծեալ եմք ամենեքեան,
Բըժի՛շկ իմաստուն եւ ճարտարապետ,
բըժըշկեա՛ զհոգւոյ իմ զհիւանդութիւն,
Արարո՛ղ եւ Յո՛յս փըրկութեան մերոյ:*

Նման անձնականացումը բանաստեղծական խոսքին հաղորդում է առավել հուզական հնչեղանգ, ինչն ավելի է ներագդել ունկնդրի ներաշխարհի վրա: Ըիշտ է նկատել Կ. Կոստանյանցը, որ Պետրոս Գետադարձի երգերում «երեսում է նուրբ ճաշակ, վսեմ գաղափար եւ... հոգեկան վիճակի բնական արտայայտություն»¹:

Ննչեցելոց կանոնում կան մի շարք այլ գեղեցիկ երգեր: Սակայն կարծելով, որ այդ երգերը հետագա հավելումներ են, այսինքն՝ չեն պատկանում Պետրոս Գետադարձի գրչին, չենք կատարում դրանց քննությունը: Այսուհանդերձ, հարկ է նշել, որ Պետրոս Գետադարձը ննչեցելոց թեման արժարժող երգաբանության ամենախոշոր ներկայացուցիչն է և, որպես այդպիսին, իր առանձնահատուկ տեղն ունի շարականագրության մեջ:

Պետրոս Գետադարձը մեր օրհներգության մեջ իր պատվավոր տեղն ունի նաև որպես սրբախոսական շարականների կամ Մանկունք-առավոտերգերի հեղինակ: Նա է գրել մեր Եկեղեցու տոնելի հայ և այլազգի մի շարք սրբերի նվիրված կանոնական շարականները²: Կարծում ենք, որ նա ինքն է, որպես կաթողիկոս, Հայ Եկեղեցու տոնակարգում հաստատել իր գովերգած սրբերի (ինչպես նաև Վահան Գողթնացու) հիշատակի օրերը:

¹ Կ. Կոստանյանց, Տէր Պետրոս Ա. Գետադարձ, էջ 48:

² Հայտնի են նաև որոշ սրբերի նվիրված պարականոն շարականներ (տե՛ս Ս. Ամատունի, Նշված աշխատ., էջ 157-163, 165-170):

1-ին դարի վկայունի է Հայ Եկեղեցու Ասխատարտիրոսունի, Թադեոս առաքյալի սանունի, հայոց Սանատրուկ արքայի դուստր Սանդուխտը: Քրիստոնեություն ընդունելու և սուրբ հավատը չուրանալու համար նա հեթանոս հոր հրամանով բանտարկվել է և նահատակվել¹: Ծնորհք արք. Գալուստյանի բնութագրմամբ, «Ինչ որ է Ս. Ստեփանոսը Քրիստոնեական եկեղեցիի համար, նոյն է Ս. Սանդուխտը Հայ եկեղեցիի համար»²:

Պետրոս Գետադարձն առաջինն է պանծացրել այս հայ արքունուն, որին ձոնված շարականի առաջին տան մեջ ասել է.

*Քեւ պարծի այսօր Եկեղեցի,
ն՛վ վկայունի Սուրբ Սանդուխտ,
որ զհայրականըն քո թողեր զպաշտօն,
վսարն Քրիստոսի հեղեր զարիւն քո սուրբ:*

5-րդ դարում Ստեփանոս Սյունեցին հեղինակել է Մարտիրոսաց կարգը, որտեղ ընդգրկել է նաև առաջին տիեզերական ժողովներին մասնակցած եկեղեցական հայրերին՝ սուրբ հայրապետներին նվիրված յոթ երգեր: Պետրոս Գետադարձը սահմանելով Սուրբ հայրապետաց տոնը, գրել է նաև նրանց ձոնված մի սրբախոսական-դավանաբանական Մանկունք, որը հետագայում Ներսես Ծնորհալին զետեղել է իր ստեղծած համապատասխան կանոնի մեջ:

Իր հեղինակած այդ հնգատուն շարականում³ Պետրոս Գետադարձը պանծացրել է Նիկիայի, Կոստանդնուպոլսի և Եփեսոսի տիեզերական ժողովներին մասնակցած սուրբ հայրապետների գործը: Հետևելով Ստեփանոս Սյունեցուն, որը երանելի հայրապետներին համարել է «քաջ եւ յաղթող», Գետադարձը նրանց կոչել է «միշտ յաղթողք ի մարտի»: Նախ հավաքվելով Նիկիայում՝ նրանք մաքրեցին «գորոմն ապականիչ», այսինքն՝

¹ Վկայաբանությունը տե՛ս «Սոփերք Հայկականք», Ը, Վեներտիկ, 1853:

² Գ. Արք. Գալուստեան, Հայագգի սուրբեր, Երևան, 1997, էջ 204:

³ Թերևս այլ հեղինակի ձեռքով այս շարականին կցվել են ևս երեք տներ, որոնք կրճատվելով՝ պարականոն են դարձել (տե՛ս Ս. Ամատունի, Նշված աշխատ., էջ 151):

հերքեցին արիսական պիղծ աղանդը և սահմանեցին կանոններ, որոնց համաձայն Քրիստոսը, որպես Հորից ծագած Բան, պիտի դավանվի իբրև «Մնունդ եւ ոչ արարած, միշտ՝ Համագոյակից ընդ Հօր եւ Հոգւոյն»:

Ծարականի երկրորդ և երրորդ տները վերաբերում են Կ. Պոլսի տիեզերական ժողովին, որտեղ հայրապետները հանդես են եկել Մակեդոնի հոգեմարտական ուսմունքի դեմ, ըստ որի կասկածի տակ է առնվել Սուրբ Հոգու Աստվածությունը: Այս կապակցությամբ շարականագիրը գրել է հետևյալ ազդեցիկ տողերը.

*Արմատ անհծից կրրկին ընձիղեալ
Մակեդոն հայհոյիչ, գալլ ապականիչ.
յարձակեալ՝ խողխողէր զընտիրսն ի հօտէ գառանց
եւ գահավէժ ցրնդմամբ խարդաւանեալ ի վիհըն.
Արզովեցին զՄակեդոն, զհայհոյիչ լեզուն:*

*... Եւ դասանեցին Սուրբ զՀոգին՝ ելող ի Հօրէ, Էակից Որդոյ,
եւ Կենդանարար՝ ազանց բոլորեցունց...*

Վերջին տունը վերաբերում է Եփեսոսի ժողովին, որն ուղղված է եղել նեստորականության դեմ: Ժողովի ընդունած որոշմամբ, Բան-Քրիստոսը մարդեղացած Աստված է, որի մեջ երկու բնությունը գործում է միավորված: Հայ Եկեղեցու դավանանքի հիմքը կազմող այս դրույթն է յուրովի ներկայացրել Պետրոս Գետադարձը՝ գրելով.

*Բանըն թանձրանայ ի մարմնի,
մարմնանայ Անմարմինըն՝ միացեալ բընութեամբ ի յերկուց,
ախտակրեալ ի վերայ քառաթեւ խաչին
եւ վերառեալ ի թաղումէ անապական.
Արզովեցին ըզ Նեստոր եւ զաղանդն իւր պիղծ:*

Վաղքրիստոնեական վկաներ են Ոսկյանք և Սուքիասանք: Ոսկյանք հռոմեացի հինգ ճգնավորներ էին, Թադեոս առաքյալի աշակերտները: Նրանց առաջնորդին առաքյալը կոչել է Խրյուստո (Ոսկի), այստեղից էլ ծագել է այդ խմբի անունը: Նախապես նրանք Հռոմի կայսեր կողմից որպես պատգամավորներ

նույսրկվել են Հայաստան, Սանատրուկ թագավորի արքունիքը, սակայն ընդունելով քրիստոնեություն՝ առանձնացել են Ծաղկոտն լեռներում: Այստեղ 40 տարուց ավելի ճգնելուց հետո գնացել են Արտաշես թագավորի արքունիք՝ նոր հավատքը քարոզելու: Նրանց քարոզչությամբ դարձի են եկել Սաթեհիկ թագուհու ազգակից ավան իշխանները՝ Սուքիասի գլխավորությամբ: Առանձին ճգնավորական խումբ կազմելով՝ Սուքիասանք առանձնացել են Բագրևանդ գավառի Սուկավետ լեռներում: Թե՛ Ոսկյանք և թե՛ Սուքիասանք հալածվել են և նահատակվել¹...: Նրանց վկայաբանությունների հիման վրա է, անշուշտ, Պետրոս Գետադարձը հյուսել իր շարականները, որտեղ գտնում ենք այսպիսի գրավիչ տողեր.

*... Աստուածային հրով մաքրութեան ոսկի փորձեալ զըտայք
ո՛վ երանելի Սուրբ Ոսկեանք...
Որք բարձին ըզխաչս իրեանց,
Խաչելոյն խաչակցեցան՝
դիմելով յօժարութեամբ առ սատակիչսըն,
որպէս գառինս ի մէջ գայլոց:*

Հայ Եկեղեցու տոմեղի սրբերի կարգում են դասված նաև որոշ այլ օտարազգի վկաներ, որոնք նաև համաքրիստոնեական սրբեր են: Նրանցից են 4-րդ դարի սկզբին նահատակված աթենացի Միմասը (Երմոգիների և Գրաբոսի հետ), որին ձոնված շարականը ևս, մեր կարծիքով, Պետրոս Գետադարձն է հեղինակել²:

Բավական արտահայտիչ է կոնիացի այրի կին Հուդիտային և նրա մանուկ որդի Կիրակոսին³ ձոնված Մանկունքը, որտեղ կարդում ենք.

¹ Վկայաբանությունները տե՛ս «Սոփերք Հայկական», ԺԹ, Վեներտիկ, 1854, էջ 33–56, 59–66:

² Պահպանվել են նաև Սուրբ Միմասին նվիրված երկու պարականոն շարականներ, որոնց հեղինակները հայտնի չեն (տե՛ս Ս. Ամատունի, Նշված աշխատ., էջ 157–158):

³ Տե՛ս Շ. Արք. Գալուստեան, Համաքրիստոնեական սուրբեր, Երևան, 1997, էջ 148–149, 180–181, 196:

*Աստուծո՛ր՝ մօր բարեպաշտ որդի՛
եւ երկնատր Հանդիսադրի նահատա՛կ,
քաջ ըսպատագէ՛ն զհնուորեալ Հոգւով,
տրդայ գոյով մարմնով՝ մարտ ընդ անօրէ՛նսն եղեալ՝
պըսակեցար, ո՛վ Սուրբ Կիրակոս՛...*

Ուշագրավ է, որ խոսքն ընդամենը երեքամյա մանկան մասին է...

Թերևս մեկ այլ հեղինակ, հավանաբար ներշնչվելով այս շարականից (հատկապես երկրորդ տողից. «վերաբուսեալ ծաղիկ հաւատոյ») գրել է Սուրբ Կիրակոսին և Հուլիտային նվիրված մեկ այլ երգ՝ «Վարդագոյն վառեալ ծաղիկ» սկսվածքով, որի տների սկզբնատառերով հոդվում է՝ **Վարդ**: Կանոնական Շարակնոցում այն կցված է Պետրոս Գետադարձի հեղինակած Մանկունքին:

Պարսիկ հոր և քրիստոնյա մոր զավակ է 701 թվականին նահատակված Դավիթ Դվնեցին: Նախկինում եղել է մահմեդական (Սուրհան անունով), ծառայել է Հայաստանում՝ արաբական բանակում: Ընդունել է քրիստոնեություն և իր հավատքը չուրանալու համար նահատակվել է արաբ ոստիկան Աբդուլահի հրամանով²: Այս վկան էլ տոնելի սրբերի շարքում է: Ուշագրավ է հատկապես նրան ձոնված շարականի վերջին տողը, որտեղ հեղինակը խնդրում է սրբին բարեխոս լինել Աստծո առաջ ոչ թե ի փրկություն հոգիների, ինչպես արվում է սովորաբար, այլ որպեսզի Աստված «Փրկեսցէ զմեզ ի հարաւային կործանմանէն»: Այսինքն՝ արտահայտել է իր ժամանակ օտարների կողմից բռնադատված իր հայրենիքի փրկության իղձը:

Հայոց նախամարտիրոսուհի Սրբուհի Սանդուխտից զատ, Պետրոս Գետադարձը, որպես ծնունդով զուտ ազգային վկաների, անդրադարձել է նաև Ատոմանց և Վարդանանց նահատակներին:

Ատոմանք կազմել են երկու հայ նախարարական գնդեր

¹ Այլ օրհներգերի հետ այս Մանկունքի ունեցած տեքստային առնչությունների մասին տե՛ս Գ. Հակոբյան, Նշված աշխատ., էջ 194–195:

² Վկայաբանությունը տե՛ս «Սոփերք Հայկական», ԺԹ, էջ 85–96:

(շուրջ 1000 հոգի), որոնք ծառայել են պարսկական բանակում և Հազկերտ Բ-ի օրոք, 449 թվականին, նահատակվել են հանուն քրիստոնեական հավատքի: Նրանց առաջնորդն են եղել Ասոմ Գնունին և Մանաճիհր Ռշտունին¹: Հատկապես ազդեցիկ է նրանց ձոնված Մանկունքի երկրորդ տունը՝ գրված ռազմաշունչ ոգով.

*Որք առին ըզսպառագիճութեան զրահըս հաւատոյ
սըրտից իրեանց
եւ ընկալան ի գլուխ սաղաւարտ փըրկութեան ըզճըշան
Խաչին,
սուսեր ընդ մէջ ածեալ ըզճըշմարիտ Սուրբ Հոգին.
բարեխօսութեամբ սոցա, Քրիստո՛ւ, խընայեա՛ ի մեզ:*

Ուսումնասիրության կարոտ ինչ-ինչ պատճառներով վարդանանց նահատակների հիշատակին նվիրված տոնը մեր Եկեղեցու տոնակարգում հաստատվել է բավական ուշ: Համենայն դեպս Եղիշեի և Ղազար Փարպեցու Պատմություններից հետո մեր այդ մեծանուն հերոսներին փառաբանող մեզ հայտնի հաջորդ գրվածքը, արդեն իբրև հոգևոր երգ, հեղինակել է Պետրոս Գետադարձը: Ինչպես գրում է Ն. Թահմիզյանը, «Վարդանանց հիշատակը հայ եկեղեցին մինչև XI դարի կեսերը նշել է՝ մարտիրոսաց երգաշարքից զանազան կտորներ երգել տալով: Անիի անկումից հետո, սակայն, մի նոր նշանակություն է ստանում Վարդանանց տոնը, և պահանջ է առաջ գալիս՝ այն իմաստավորող հատուկ երգեր ունենալու: Դրան ներքին մղումով արձագանքած առաջին հեղինակներից մեկը եղել է Պետրոս Գետադարձը»²: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Պետրոս Գետադարձն է հեղինակել Վարդանանց ձոնված առաջին շարականը, կարծում ենք, որ հենց այդ կաթողիկոսն է վավերացրել նրանց տոնը: Վարդանանց նվիրված շարականը ոգով ու ոճով ասես շարունակում է Ասոմանց ձոնված Մանկունքին: Բոլոր այդ հերոսները հաղթող զորականներ են, քանզի նահատակվելով՝ պսակավորվել են Քրիստոսից.

¹ Վկայաբանությունը տե՛ս նույն տեղում, էջ 69–82:

² Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին, էջ 233:

*Արիացեալք առ հակառակսրճ՝
քաջութեամբ առնուլ ըզվրէժ խաբէութեան,
հանճարեղք ի հատուցումըն դասանանըն՝
զամբարոյշտացն արդարադատ չափմամբ,
զօրակա՛նք յաղթողք՝ պրսակեալք ի Քրիստոսէ:*

Ինչպէս Դավիթ Դվնեցուն նվիրված շարականում, այստեղ էլ օրհներգուն յուրովի արտահայտում է անօրենների բռնությանը վերստին ենթարկված հայության ազատության տենչը.

*Հայցեցէ՛ք զխաղաղութիւն, ճըշմարիտ վըրկա՛յք Սըրբոյ
Երրորդութեանըն,
նեղելոցս յանօրինաց բըռնութենէ,
զի ցընծասցոյք յաղթանակաւ մարտի ձերոյ,
նահատա՛կք արգոյք՝ պրսակեալք ի Քրիստոսէ:*

Պետրոս Գետադարձը Վարդանանց նահատակների առաջին գովերգուն է, որին հետևեցին այլ հեղինակներ (Հովհաննես Իմաստասեր, Ներսես Ծնորհալի): Ստեղծելով ննջեցելոց կանոնի երգերի հիմնական մասը և մի շարք սրբախոսական Մանկունքներ, Գետադարձը նոր լիցք հաղորդեց շարականագրությանը՝ մասնավորապես և միջնադարյան բանաստեղծությանն՝ ընդհանրապես:

Պետրոս Գետադարձն իր կազմած Ննջեցելոց կանոնում, ինչպէս նշեցինք, ներառել է նաև երգեր, որոնք, ըստ երևութին, նրա հանձնարարությամբ, գրել են նրա որոշ ժամանակակիցներ, որոնք նույնպէս Անիի շարականագրության դպրոցի ներկայացուցչներ են: Առաջինն անդրադառնանք **Սարգիս վարդապետ Սևանեցուն**¹: Ննջեցելոց կանոնի չորրորդ շարքում,

¹ Սարգիս Վարդապետ Սևանեցուն չպետք է շփոթել Սարգիս կաթողիկոս Սևանեցու հետ, որը նախորդել է Պետրոս Գետադարձին: Այս կապակցությամբ տե՛ս Ա. Արևշատյանի «Անիի երաժշտական մշակույթը եւ նրա հետ կապուած շարականագիրները» հոդվածը («Բազմավեպ», 1995, էջ 211–212):

մեր կարծիքով, Սահակ Պարթևի հեղինակած կցուրդ-երգերից հետո առկա են հինգ երգեր, որոնք ոճով և ոգով կազմում են մեկ ամբողջություն: Դրանք, մեր համոզմամբ, հեղինակել է Սարգիս Սևանեցին¹:

Սարգիս վարդապետ Սևանեցին գործել է 11-րդ դարի կեսերին Անիում, ապա եղել է Սևանի վանքի առաջնորդ²: Մատթեոս Ուոհայեցին նրան հիշում է ժամանակի նշանավոր վարդապետների շարքում³: Սևանեցին եղել է Գրիգոր Մագիստրոսի մտերիմներից և թղթակցողներից մեկը: Մագիստրոսը նրան համարել է «հզօր ի պուետիկոսականն մատենագրութեան»⁴: Ահա պատճառներից մեկը, որ դրդել է Պետրոս Գետադարձին հանձնարարելու նրան՝ գրել Ննջեցելոց կանոնի որոշ երգեր:

Գ. Զարպխանայանի վկայությամբ, Սարգիս Սևանեցու անունով «ճառ մը կայ ննջեցելոց վրայ՝ ի յունակամեն թարգմանումս ի հայ»⁵: Ահա և մյուս պատճառը, որ Պետրոս Գետադարձին մղել է նշված հանձնարարությունը կատարելու Սարգիս Սևանեցուն:

Նշեցինք, որ Սարգիս Սևանեցին է Ննջեցելոց կանոնի չորրորդ շարքում ընդգրկված հինգ երգերի հեղինակը: Այդ երգերը, հիրավի, մեկ հեղինակի գրչի և հոգու արգասիք են: Ուշագրավ է հատկապես առաջին երգը, որի առաջին տան մեջ շարականագիրը հորդորում է հավատացյալ մարդու (թերևս անձամբ իր) հոգուն, ասելով.

¹ Մինչև այժմ Սարգիս Սևանեցին հեղինակ է համարվել միայն այդ հինգ երգերը եզրափակող «Սարսափելի որոտմամբ» սկսվածքով երգի, որի տների սկզբնատառերով հողվում է **Սարգիս** անունը:

² Կ. Կոստանյանցը տարբեր անձինք է համարել Սարգիս Անեցուն և Սարգիս Սևանեցուն (տե՛ս **Գրիգոր Մագիստրոս**, Թղթեր, Ալեքսանդրասյոլ, 1910, էջ 294: Այս կապակցությամբ տե՛ս նաև **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հտ. Դ, էջ 410–411): Սակայն թե՛ ըստ Ալիշանի և թե՛ ըստ Զարպխանայանի, այս պարագայում գործ ունենք նույն անձի հետ (տե՛ս **Ղ. Ալիշան**, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 50: **Նույն**, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 83: **Գ. Զարպխանալեան**, Հայկական հին դպրութեան պատմություն, Վենետիկ, 1886, էջ 572):

³ Տե՛ս **Մատթեոս Ուոհայեցի**, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 179:

⁴ **Գրիգոր Մագիստրոս**, Թղթեր, էջ 57:

⁵ **Գ. Զարպխանալեան**, Նշված աշխատ., էջ 572:

*Հաստ ունելով, հոգի՛, խաղաղութեան՝
ե՛րթ առ Արարիչըն՝ հայցելով.
«Աստո՛ւած իմ, հանգո՛»:*

Երգի երկրորդ տան մեջ դիմելով Հիսուսին՝ օրհներգում խնդրում է, որ երկնային Թագավորը պահպանի և խաղաղության մեջ հանգսեցնի իր Խաչին և Հարությանը հավատացած հոգուն, որին վերջին տան մեջ մաղթում է.

*Ի քաղաք Տեսուն գորութեանց եւ ի քաղաք Թագաւորին Մեծի,
ուր ժողովք սրբոցն են ի խաղաղութեան,
գրնասցես յուսով եւ հանգիցես ընդ հրեշտակաց դասըս՝
տեսանել ըզլոյսն յաիտեննից:*

Երկրորդ երգում հեղինակն արդեն ուղղակիորեն նկատի ունենալով իր անձը՝ ասում է.

*Մերձեցաւ անձն իմ ի հող, յորմէ ստեղծեք զիս,
եւ հոգւոյս մեկնեալ յինէն,
Տէ՛ր, գապաիսնեալս յիշեա՛ ի Քում գալըստեանըն:*

*Ստեղծուած եմ անարատ ձեռոց Քոց՝ մի՛ անտես առներ,
այլ խընայեա՛ յիս յահագին աւուրըն,
Տէ՛ր, գապաիսնեալս յիշեա՛ ի Քում գալըստեանըն:*

Հաջորդ երգերն արդեն ներկայացնում են «ահագին օրը»՝ ահեղ դատաստանը, երբ

*Յերեսաց Տեսառն լերինք հալին,
եւ ի յահէ փստաց Նորա շարժին գորութիւնը:*

Բերված օրինակները վկայում են, որ Սարգիս Սևանեցին, հիրավի, «պուետիկոսականն մատենագրութեան» մեջ հմուտ է եղել: Ցավոք, նրա անվամբ մեզ դեռևս հայտնի չէ մեկ այլ բանաստեղծական գործ...

11-րդ դարի նշանավոր վարդապետներից է նաև **Հակոբ Սանահնեցին** (վախճ. 1085): Նա գործուն մասնակցություն է ունեցել հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերություններին ու դավանաբանական հակամարտություններին: Մատթեոս

Ուոհայեցի՛ն Արամ համարել է «այր հօօր եւ կորովի: Սորա հասեալ ի վերայ հին և նոր կտակարանացն Աստուծոյ, ուսեալ եւ հասեալ սորա ի վերայ հոնտորական իմաստութեանցն եւ տեղեկացեալ ամենայն փիլիսոփայական խորին գիտութեանցն»¹:

Սանահնեցի՛ն հեղինակել է մի ժամանակագրություն: Ծարակնոցի ցանկում Արամ է վերագրված «Յանսկզբնական ծոցոյ Հօր» սկսվածքով երգը², որ ընդգրկված է Ննչեցելոց կանոնի վեցերորդ շարքում՝ իբրև Ողորմեա: Տների սկզբնատուերով հողվում է **Յակոբ**: Գրված է պարզ և մատչելի լեզվով, «իմաստքն բացայայտ են, եւ կազմութիւնն՝ վայելոյ էւ հոգեշարժ»³: Սակայն թե՛ իմաստային և թե՛ բանաստեղծական կատարման առումով այս շարականն առանձնապես նորություն չի բերում...

11-րդ դարի հայ մշակույթի, գիտության ու դպրության թերևս ամենախոշոր ներկայացուցիչը **Գրիգոր Մագիստրոս Պահլավունցի** է (մոտ 990–1058): Նրա թողած մեծածավալ մատենագրական ժառանգության մեջ կան նաև բանաստեղծական գործեր, որոնց զգալի մասը գրված է կանոնավոր տաղաչափությամբ և հանգերով: Այս առումով, նա հիրավի նորարար է միջնադարյան հայ քերթության մեջ: Նա, ինչպես գրել է Մ. Աբեղյանը, «չի օժտված քերթողական տաղանդով, այլ միայն տաղաչափական տեսակետով»⁴: Նրանից առաջ, ինչպես նշեցինք, Գրիգոր Նարեկացին ստեղծել էր գանձը՝ տաղ և փոխ բաղադրիչներով, ինչպես նաև բանաստեղծական աղոթքը՝ իբրև

¹ **Մատթեոս Ուոհայեցի**, Ժամանակագրություն, էջ 226:

² «Ծարական», էջ Բ: Տե՛ս նաև **Մ. Չամչեան**, Պատմություն Հայոց, հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 8: Ըստ Գ. Ավետիքյանի, այս երգը «կարծի արարեալ Յակոբայ կլայնցոյ կաթողիկոսի» (**Գ. Աւետիքեան**, Բացատրություն, էջ 655): Լ. Աճառյանի կարծիքով, Հակոբ Սանահնեցուն պետք է վերագրել Հակոբ Մծբնեցուն ձոնված շարականը (տե՛ս **Լ. Աճառյան**, Անձնանունների բառարան, հտ. Գ, էջ 484): Սակայն ձեռագիր աղբյուրներում այդ շարականը վերագրված է Ներսես Ընդհալուն կամ Հովհաննես Երզնկացուն: Այս կապակցությամբ տե՛ս նաև «Բազմավէպ», 1995, էջ 212–215:

³ **Գ. Աւետիքեան**, Բացատրություն, էջ 655:

⁴ **Մ. Աբեղյան**, Երկեր, հտ. Դ, էջ 48:

երաժշտությունից տարանջատված բան (բանաստեղծություն): Մագիստրոսն էլ ստեղծել է թե՛ տաղեր և թե՛ հատկապես վիպական, գեղարվեստական և ուսուցողական բնույթի բաներ, որոնց շնորհիվ նա նորարար է հայ քերթության մեջ: Մագիստրոսին է վերագրված «Խաչն կենարար» շարականը, որ ընդգրկված է Խաչվերացի երրորդ օրվա կանոնում՝ իբրև Օրհնություն¹:

Գրիգոր Մագիստրոսի թղթակիցներից մեկն է եղել նաև **Դանիել Երաժիշտը**²: Վերջինիս մասին, ցավոք, շատ բան հայտնի չէ: Ինչպես գրում է Ղ. Ալիշանը, «Պահլաունեաց իմաստասեր անհապետն Գրիգոր Մագիստրոս՝ իր թղթոց մեջ շատ հեղ եւ մեծ գովութեամբ յիշէ զԴանիել ոմն երաժիշտ, նոր Որփեսա կոչելով. ասոր թոյի անսովոր մնացած շարական մը, Մեծացուցէ, ակ. որոյ տնագլուխք *Դանիել* կապեն, եւ սկսի. «Դասապետն հրեշտակաց եւ սպասաւոր երկնից արքային»³:

Նշեցինք, որ Պետրոս Գետադարձի կազմած Ննջեցելոց կանոնի վեցերորդ և յոթերորդ դրվագներում առկա են Մեծացուցեաներ, որոնք այլ հեղինակի գործեր են: Կարծում ենք, որ այդ հեղինակը Դանիել Երաժիշտն է, որին ևս Պետրոս Գետադարձը, հավանաբար, հանձնարարել է երգեր գրել իր ստեղծած կանոնի համար: Այդ կանոնում ընդգրկված Մեծացուցեաներից մեկում կան այսպիսի տողեր.

*Լեա՛ղըն վիմաճին, Աղբի՛ւր յորդատատ,
Բարունա՛կ ծաղկեալ, Այգի՛ վայելուշ, Սրովբէ՛ հողեղէն...
Սափո՛ր ոսկեղէն՝ լի մանանայի...*

Դանիել Երաժիշտի պարականոն Մեծացուցելի վերջին տան մեջ էլ ասված է.

¹ Սույն շարականը Գրիգոր Մագիստրոսին է վերագրել Հակոբ Սսեցին (տե՛ս **Հ. Անապյան**, Հայկական մատենագիտություն, հտ. Ա, էջ LXXIV: Այս կապակցությամբ տե՛ս նաև «Բազմավեպ», 1995, էջ 208–209):

² Տե՛ս **Գրիգոր Մագիստրոս**, Թղթեր, էջ 123–127:

³ **Ղ. Ալիշան**, Ընորթակի եւ պարագայ իր, Վեներտիկ, 1873, էջ 90: Այդ շարականը, որ դուրս է մնացել կանոնական Ծարակնոցից, հրապարակել է Ս. Ամատունին (էջ 13–14):

*Լուսազարդ Շուշան ծաղի՛կ եւ Մորենի՛ անկիզելի,
Լեա՛նն վիմսածին, Երկի՛ր բանաւոր,
Սափո՛ր ոսկի կենաց հացին, Կո՛յս Մարիամ,
օրհնութեամբ երգով ըզՔեզ մեծացուցանեմք:*

Դանիել Երաժիշտը ժամանակին մեծ համբավ ունեցող և նոր Օրփէնս համարված երգաստեղծ լինելով, անշուշտ, հորինել է բազում այլ երգեր...

7–11-րդ դարերում է ստեղծվել «Սրբոց Քառասնից» կանոնը՝ նվիրված 320 թվականին Սեբաստիային մերձ լճում նահատակված քառասուն քրիստոնյա զինվորների: Այս կանոնի հիմնական հեղինակն անհայտ է: Գրիչներից մեկն այն ընծայել է Մեսրոպ Մաշտոցին: Սակայն, ինչպես գրում է Ս. Ամատունին, «Ի նկատի առնելով Քառասուն մանկանց հին շարականների գրութիւնները եւ նրանց մէջ գեղուած, խոնուած Ե-րդ դարին ոչ յատուկ եւ անսովոր բարդ բառերի գործածութիւնը, մենք հաւանական չենք համարում, որ Թարգմանիչը (Մաշտոցը – Հ. Բ.) լինի նրանց հեղինակը, այլ այդ շարականները յօրինուած են Է-րդ դարում. ո՛ր գիտէ, զուցէ գրել է Անանիա Օիրակացին իւր ուրիշ շարականների հետ... Կամ գրել է ԺԱ-րդ դարում «Սիսիանոս վարդապետ Սեբաստացի, որ... Քառասուն մանկանց վրայ ընտիր եւ գեղեցիկ ներբողեան մը շարադրած է»¹:

Որոշակի է, որ «Սրբոց քառասնից» կանոնը ստեղծվել է մինչև Ներսէս Շնորհալին, որն այն համալրել է իր հեղինակած երկու շարականներով...

Այսպիսով, 7–11-րդ դարերում Կցուրդարան-Շարակնոցը բավական հարստացել է. համալրվել են նախկին կանոնները: Ստեղծվել են նաև նոր կանոններ և արտականոնային շարականներ, որոնք նշում ենք ստորև արդի կանոնական Շարակնոցի հերթականությամբ և հիմնական հեղինակների հիշատակումով:

¹ Ս. Ամատունի, Նշված աշխատ., էջ 66–67:

- Կանոն Դաթի մարգարէին
եւ Յակոբայ առաքելոյն – ՅՈՎՀԱՆ ՕՋՆԵՑԻ
Կանոն Ստեփանոսի նախավկայի – ՅՈՎՀԱՆ ՕՋՆԵՑԻ
Կանոն առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի – ՅՈՎՀԱՆ ՕՋՆԵՑԻ
Կանոն Որդւոցն Որոտման – ՅՈՎՀԱՆ ՕՋՆԵՑԻ
Կանոն սրբոց Քառասնից – ԱՆԱՆՈՒՆ
Կանոն Աշխարհամատրան Կիրակէին – ԲԱՐՍԵՂ ԾՈՆ
Կանոն Համբարձման Քրիստոսի – ԱՆԱՆԻԿԱ ԾԻՐԱԿԱՑԻ
Կանոն Սրբոց Հոփսիմեանց – ԿՈՄԻՏԱՍ ԱՂՅԵՑԻ
Շարական Սրբուհւոյն Սանդիտոյ – ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐՁ
Կանոն Շողակաթին – ՍԱՀԱԿ ՋՈՐՈՓՈՐԵՑԻ
Կանոնք Վերացման Սրբոյ Խաչին – ՍԱՀԱԿ ՋՈՐՈՓՈՐԵՑԻ
(ութ օրերի կանոններ)
- Կանոն Վարագայ Խաչին – ՍԱՀԱԿ ՋՈՐՈՓՈՐԵՑԻ
Կանոն Գիւտ Խաչին – ՍԱՀԱԿ ՋՈՐՈՓՈՐԵՑԻ
Շարական Սրբոց Հայրապետացն – ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐՁ
Շարական Սրբոց Սուքիասանց – ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐՁ
Շարական Սրբոյն Վահանայ Գողթնացւոյն – ՍԱՀԱԿԳՈՒԽՏ
Շարական Սրբոյն Դաթի Դվնեցւոյն – ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐՁ
Շարական Սրբոցն Կիրակոսի եւ Յովիտայի – ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐՁ
Շարական սրբոցն Մինասայ,
Երմոզիմեայ եւ Գրաբոսի – ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐՁ
Շարական սրբոց Ոսկեանց – ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐՁ
Շարական սրբոց Ատոմանց – ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐՁ
Շարական սրբոց Վարդանանց – ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐՁ
Կանոն համօրէն ննջեցելոց ի Քրիստոս – ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐՁ
(ութ շարք)